

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Տնտեսության Բարելավման Միտումները

Վերջին ամիսներին Հայաստանի տնտեսությունը ցոյց կու տայ բարելավման նշաններ գրեթե բոլոր բնագավառներէ ներս՝ տնտեսական աշխուժութիւն, ապրանքաշրջանառութիւն, շինարարութիւն, արտասահմանեան փոխանցումներու ներհոսք, զբօսաշրջիկներու թիւի բարձրացում մեծ տոկոսներով, պետական պարտքի նուազում եւ տնտեսական այլ զարգացումներ:

Միջազգային վարկանիշային «Ֆիթչ» կազմակերպութիւնը օրերս բարձրացուց Հայաստանի վճարունակութեան աստիճանը B+ի, ինչ որ կը նշանակէ թէ երկիրը արտաքին դրամատուներէն կրնայ պարտք վերցնել աւելի ցած տոկոսներով: Կազմակերպութիւնը այժմ Հայաստանի համար կը նախատեսէ 6.4% տնտեսական աճ՝ նախկին 1.3 տոկոսի փոխարէն: «Ֆիթչի» վերլուծողները այս յառաջխաղացումը կը վերագրեն Ռուսիոյ դէմ պատժամիջոցներուն, որոնք յանգեցուցած են Ռուսաստանի, Ուքրանիոյ եւ Պելառուսիոյ քաղաքացիներու դէպի Հայաստան զգալի գաղթին՝ աճելով 515 տոկոսով:

Կեդրոնական դրամատան տուեալներուն համաձայն, այս տարուան առաջին իրիմ ամիսներուն արտերկրէն հայաստանեան դրամատուներու միջոցով քաղաքացիները ստացած են 1 միլիար 272 միլիոն տոլար: Նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աճը կազմած է 70 տոկոս:

ՀՀ Վիճակագրական կոմիտէին հրապարակած տուեալները եւս կու գան փաստելու որ, երկրի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը Յունուար-Յունիսին աւելցած է 13.1 տոկոսով, նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ:

Համաճարակի հետեւանքով տուժած զբօսաշրջութեան բնագաւառը եւս կ'արձանագրէ մեծ յա-

Շար.ը էջ 6

Մինչեւ Տարեվերջ Տրամադրուած Ենք Խաղաղութեան Պայմանագիր Կնքելու, Կ'ըսէ Նիկոլ Փաշինեան

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի Պրիւքսէլի մէջ կայացած հանդիպումէն ետք, Ազգային ժողովի «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւորները հանդիպում ունեցած են վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ: Հանդիպման ընթացքին թէ՛ խմբակցութեան պատգամաւորները, եւ թէ՛ վարչապետ Փաշինեանը վերահաստատած են, որ հաւատարիմ կը մնան տարածաշրջանին մէջ խաղաղութեան դարաշրջանի բանալու իրենց նախընտրական խոստման եւ ուժերու ներածին չափով ամէն բան պիտի ընեն տարածաշրջանին մէջ կայունութեան հաստատման ու պահպանման համար:

Տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակը ու ընթացող



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի Պրիւքսէլի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

աշխարհաքաղաքական հոլովոյթները այլ ելք չեն թողներ, բացի խաղաղութեան հաստատումէն ու

պահպանումէն, ընդգծած են հան- Շար.ը էջ 5

ՀԿԲՄ-ը Կը Ներկայացնէ 2022-2023 Տարեշրջանի Կրթանպաստներու Արժանացած Ուսանողները



Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) Կրթանպաստներու Հիմնադրամի Յանձնախումբը ուրախ է յայտարարելու իր 2022-2023 տարեշրջանի մրցանակակիրները՝ Միացեալ Նահանգներէն, Հայաստանէն եւ Լիբանանէն:

ՀԿԲՄ-ի կրթանպաստներու

Յանձնախումբը ստացած էր մեծ թիւով դիմումներ՝ բարձր որակաւորում ունեցող թեկնածուներէ, երեք երկիրներու մէջ: Ընտրութեան գործընթացը բաւական դժուար էր, սակայն բաւարարութիւն պատճառով: Հինգ ուսանող-

Շար.ը էջ 6

Fitch Ratings-ը Ձգալիօրէն Բարելաւած Է Հայաստանի Տնտեսութեան Աճի Կանխատեսումը

Fitch Ratings միջազգային վարկանիշային գործակալութիւնը զգալիօրէն բարելաւած է Հայաստանի տնտեսութեան աճի կանխատեսումը: Հայաստանը գնահատուած է B+ մակարդակով:

Սեպտեմբեր 2-ին գործակալութեան կայքին մէջ հրապարակուած հաղորդագրութեան համաձայն՝ ուքրանական հակամարտութիւնը եւ Ռուսիոյ դէմ պատժամիջոցները յանգեցուցած են Ռուսիոյ Դաշնութեան, Ուքրանիոյ եւ Պելառուսիոյ քաղաքացիներու զգալի գաղթի Հայաստան, 2022 թուականի առաջին կիսամեակին երկիր այցելուներու թիւը տարեկան աճած է 515%-ով:

Գործակալութեան վերլուծաբանները կը նշեն, որ գաղթականներուն զգալի մասը բարձր կրթու-

Շար.ը էջ 5



ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԲԱՆ ՓԱՌԱՍՏՆ

SUNDAY, SEPTEMBER 18, 2022

VERDUGO PARK GLENDALE 1621 Canada Blvd., Glendale, CA, 91208 at 11:00 am



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Իրանը Գործնական Քայլերով Ակտիվանում Է Հայաստանում

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Հարաբերությունները Կոմիտասի սահմաններին փոփոխություններ են առաջանում...

Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարությունը, բնականաբար, նկատի ունի ՀՀ-ի սահմանները...

Ակտիվացած գործնական քայլերի շրջանակներում ՀՀ-ի հարաբերությունները Սիրիայի մարզիկներին Կապանում բացեց հիւպատոսություններ, իսկ օրերս յայտարարուեց Հայաստանի Կապանի Արտադրականի նահանգապետ Աբեղին խորամի գլխավորած պատուիրակության ժամանման մասին...

Իրանի պաշտոնական շրջանակների ներկայացուցիչը Հայաստան է ժամանել յստակ առաջարկներով: Նրա խօսքով՝ մաքսային ել տրանսպորտային խնդիրներից զատ, ՀՀ պաշտոնեանների հետ կը քննարկուի նաև հայ-իրանական սահմանին համատեղ առևտրային ել տեխնոլոգիական քաղաքների ստեղծման հարցը:

տարածքային կառավարման ել ենթակառուցվածքների նախարարների հետ:

Առևտրաշրջանառություններն իրենցումն այսօր առաջնային տնտեսական անվտանգություն հարց է դարձել ողջ աշխարհում, ել երկու հարեան պետությունների միջեւ այն մեծացնելը տնտեսական անվտանգություն կարեւոր բաղադրիչներն է, առաւել ելս, որ թեհրանի ել երեւանի միջեւ այդ ոլորտում մեծ ներուժի թեր-իրացման իրողություն կայ:

2021 թ. Իրանի Իսլամական Հանրապետության հետ 502.8 մլն ԱՄՆ տոլարի ապրանքաշրջանառություն է արձանագրուել: Այն 2020-ի նկատմամբ աւելացել է 25.2 տոկոսով: 2022 թ. առաջին 6 ամիսներին 2021-ի նոյն ժամանակի համեմատ այստեղ մեծ աճ է գրանցուել: Ընթացիկ կէս տարում արձանագրուել է 307 մլն տոլարի առևտրաշրջանառություն նախորդ տարուայ 224 մլն-ի դիմաց: Հարեան պետությունների միջեւ այս ցուցանիշը հեռու է բաւարար լինելուց, սակայն այստեղ զգալի գործօն են նաեւ միջազգային պատժամիջոցները, որոնց ազդեցություն տակ է Իրանն արդէն մի քանի տասնամեակ: Պակաս կարեւոր էլ տեխնոլոգիական համատեղ քաղաք կառուցելու մասին յայտարարությունը:

Գտնուելով երկարատեւ մեկուսացման մէջ՝ Իրանը իրենց է համապատասխան ճիւղը, այսօր աշխարհում նանոտեխնոլոգիաների զարգացման առումով 6-րդ երկիրն է, ել այդ ոլորտում համագործակցությունը կարեւոր ու հեռանկարային արդիւնքներ կարող է արձանագրել Հայաստանի համար: Նանոտեխնոլոգիաներն այսօր առաջնային տեղ ունեն ռազմական արդիւնաբերություն մէջ: Այս բնագաւառում նոյնպէս Իրանը զգալի առաջընթաց ունի, յատկապէս ԱԹՄ-ների արտադրություն հարցում, ինչն առաջնային կարեւորություն ունի ժամանակակից սպառազինություններ ունենալու գործընթացում:

Հայ-իրանական համագործակցություն սերտացումը մեծ նշանակություն ունի նաեւ ՀՀ ամենահեռու մարզի՝ Սիրիայի զարգացման առումով, ուստի առևտրի ել ՏՏ ոլորտներում համագործակցություն խորացումը բերում է երկու պետությունների առաջնային շահերից, մասնաւորապէս, այն ձեռնուռ է հարեան մարզերի զարգացման առումով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Ատրպէյճանի Շանտաժ Ու Միրզոյեանի Ել Պապիկեանի Օպերատիւ Խնդիրը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Հայաստանի պաշտպանություններն առաջարկություններ են հերքել է Ատրպէյճանի ՊՆ տարածած տեղեկությունները, թէ հայ-ատրպէյճանական սահմանին հայկական զինուժը կրակ է բացել ատրպէյճանական դիրքերի ուղղությամբ: Հայաստանի ՊՆ-ն դա որակել է հերթական ապատեղեկատուություն: Հայաստանի ՊՆ-ն Սեպտեմբերի 3-ին էլ հերքել էր ադրեյճանցիները տարածած այդպիսի տեղեկատուությունը: Շաբաթներ առաջ Ատրպէյճանի ՊՆ-ն դարձեալ տարածում էր այդպիսի ինտենսիւ ապատեղեկատուություն, որից յետոյ սրացում տեղի ունեցաւ արցախ-ատրպէյճանական շփման գծում: Ինչու է Պաքուն «վերսկսում է ապատեղեկատուությունների շարքը, թէ հայկական ուժերն իբր կրակում են հայ-ատրպէյճանական սահմանին»:

Անկասկած է, որ դա քաղաքական որոշում է, ինչի նպատակը սակայն պարզ է: Փաստացի, Պաքուի տեղեկատուական այդ արշաւը յաջողում է Օգոստոսի 31-ին Պրիւքսելում տեղի ունեցած հանդիպմանը, ել գործնականում զուգահեռում է Պոլսին-Ալիեւ հեռախոսազրոյցին, որ տեղի է ունեցել Սեպտեմբերի 3-ին ել որի ընթացքում նաեւ խօսուել է սահմանային անվտանգության ու կայունության մասին, ի դէպ: Ել դարձեալ, ի դէպ, Պաքուի տեղեկատուական այդ արշաւը յաջողում է ոչ միայն Պրիւքսելի հանդիպմանը, այլ նաեւ փաստորէն Օգոստոսի 30-ին Մոսկուայում տեղի ունեցած Գրիգորեան-Մուսաթաեւ հանդիպմանը, որ սահմանազատման ել սահմանագծման թեմայով էր: Պաքուն դժգոհ է այդ հանդիպումներից կամ դրանցից որեւէ մէկից ել փորձում է նորից գործի գցել շանտաժի մեխանիզմ, շանտաժի գործիք, որ կիրառում է պարբերաբար:

Այն, որ Պաքուն գոհ է, թերեւս անկասկած է, այլապէս չէր դիմի տեղեկատուա-քարոզչական այդ քայլին: Այստեղ գլխաւոր հարցը այն է, թէ Պաքուի այդ քայլի հանդէպ ինչպիսի վերաբերմունք են ունենալու Պրիւքսելը, Մոսկուան, Վաշինգտոնը, ակտիւ դերակատար միջնորդները: Օրինակ, երբ Պոլսինը Սեպտեմբերի 3-ի հեռախոսազրոյցում Ալիեւի հետ քննարկում է սահմանային անվտանգության ու կայունության հարցը, նա այդ քննարկման ներքոյ Ալիեւին յորդորում է կայունություն, թե՛ ապակայունացման՝ ինչ-ինչ համաձայնություններ Հայաստանին պարտադրելու նպատակով: Յամենայն դէպս, ուշադրություն է արժանի, որ Պոլսինի հետ հեռախոսազրոյցից յետոյ Ատրպէյճանի ՊՆ շարունակում

համար: Կայ նաեւ տարբերություններ, Վլադիմիր Զելենսկին իր դերասանական խաղով ել քաղաքական սքեթչերով կարողացաւ հասնել իշխանություններին: Մարտիանը նոյնպէս, լինելով սիրուած շոումեն ել սիրուած հեռուստորի գիւնակից, հեշտություններ կարող

է տեղեկատուական «գիծը»: Այստեղ թերեւս կարեւոր է Պրիւքսելի ել Վաշինգտոնի արձագանքը ել գնահատականը, յատկապէս, երբ կարող է դիտարկուել ռուս-ատրպէյճանական ապակայունացման համատեղ որեւէ մտադրություն, ինչն այդ կերպ նաեւ հարուածի տակ է դնելու այլ միջնորդների ջանքը: Եթէ իհարկէ այստեղ հիմք չկայ խօսելու այն մասին, որ այլ միջնորդները զուցէ ամենեւին էլ դժգոհ չեն այդօրինակ դրուագներից, որոնք Հայաստանի հասարակությունները շրջանում արժէգրկում են ռուսական որեւէ դերակատարում, ըստ այդմ ուղղակի, թէ անուղղակի խօսում արեւմտեան միջնորդական դերակատարման օգտին: Ամբողջ հարցն այն է, որ այդօրինակ պատկերացմամբ սխեմաները աշխատում են Հայաստանի ու Արցախի հաշուին, որովհետեւ դրանց տրամաբանությունները «կաթիլային» է, որեւէ շահառու կողմում, մինչդեռ Հայաստանի ել Արցախի համար թանկ ել կենսական կարեւորություններն է ամէն մի «կաթիլ»: Այս հարցերը թերեւս պէտք է լինեն Հայաստանի արտգործնախարարի՝ Մոսկուա, ել պաշտպանության նախարարի՝ ԱՄՆ կատարած այցերի ընթացքում օպերատիւ աշխատանքային անհրաժեշտությունները՝ գրեթէ անթերի համակարգվածություններ, օրակարգային այլ թեմաներից զատ: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY
Շար.ը էջ 6

Շոուն Պետր Է Շարունակովի

ԱՐԱՍ ԱԲՐԱՅԱՆԵԱՆ

Երէկ նայեցի «կվարտալ-95» ուկրաինական հումորային հաղորդաշարի (որը մի քիչ նման էր մեր «32 ատամ»-ին կամ «վիտամին»-ին) ել «ժողովրդի ծառան» քաղաքական սերիալի մի քանի հատուածներ: Իհարկէ, կարող էք կռահել, թէ ինչու որոշեցի նայել այդ՝ ճաշակի տեսակէտից բաւականին վիճելի հեռուստաշոունները: Պատճառը պարզ է. երէկ Երեւանի

նախկին քաղաքապետ Հայկ Մարտիանը յայտարարեց, որ «քաղաքապետը» մոնո-ներկայացմամբ վերադառնում է բեմ: Կարծում եմ, որ դա նաեւ հասարակական ել գուցէ՝ քաղաքական ասպարէզ վերադառնալու յայտ է: Չուզահեռը Զելենսկու հետ, ըստ իս, ակնյայտ է՝ դերասանը, շոունենն օգտագործում է իր մասնագիտությունն շնորհիւ ձեռք բերած ռեսուրսը՝ քաղաքականություն մէջ յաջողություն հասնելու

ԼՈՒՐԵՐ

Ճալալ Յարուբինեանին Մեղադրանք Ներկայացուած Է, Պաշտօնավարումը Կասեցուած

Մեղադրանք ներկայացուած է Արցախի Պաշտպանութեան Բանակի նախկին հրամանատար ճալալ Յարուբինեանի նկատմամբ:

ՀՀ Քննչական կոմիտէի յատկապէս կարեւոր գործերու քննութեան վարչութեան մէջ քննուող քրէական վարոյթի շրջանակներուն մէջ իրականացուած մեծածաւալ քննչական եւ վարութային գործողութիւններու հետեւանքով պարզուած է, որ զինուորական ղեկավար պաշտօն զբաղեցուցած, կոչումով՝ գորավար-լեյթենանթ ձ.Յ-ն, Ատրպէյճանի Հանրապետութեան ռազմաքաղաքական ղեկավարութեան կողմէ սանձազերծուած եւ վարած յարձակողական պատերազմին ընթացքին յատարարուած ռազմական դրութեան պայմաններուն մէջ անփոյթ վերաբերմունք դրսեւորած է իր ծառայողական պարտականութիւններուն նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով զանոնք, որպիսի գործողութիւնները յառաջացուցած են ծանր հետեւանքներ. իւրային ստորաբաժանումները



Պաշտպանութեան Բանակի նախկին հրամանատար ճալալ Յարուբինեան

կրած են մեծաքանակ մարդկային ուժի եւ զինուորական սարքերու կորուստներ, պահեստային ստորաբաժանումները դարձած են անմարտունակ, զբաղեցուցած կրակային դիրքերը անցած են հակառակորդին հսկողութեան տակ:

Վարոյթ Ընդունուած Է Սուրիկ Խաչատրեանի Ապօրինի Գոյքերը Բռնագանձելու Դիմումը

Երեւան քաղաքի առաջին ատենանի ընդհանուր իրաւասութեան դատարանը վարոյթ ընդունած է ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութեան 2022 թուականի Յուլիս 27-ին ներկայացուած ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վերաբերեալ հերթական հայցադիմումը:



Սիւնիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրեան

նեցող գոյքի բռնագանձման մասին օրէնքի 20-րդ յօդուածի 4-րդ մասը,

- Ֆիզիքական եւ իրաւաբանական անձերու տրամադրուած ընդհանուր 450.350.364 դրամ փոխառութիւններու եւ այլ պարտքերու պահանջի իրաւունքը,
 - օֆշորային կազմակերպութեան փոխանցուած 098.300.000 դրամ ներդրման գումարը:
- Գլխաւոր Դատախազութեան կողմէ կը շարունակուի դատարան ապօրինի գոյքի բռնագանձման հայցադիմումներ ներկայացնելու գործընթացը այն գործերով, որոնցով արդէն իսկ կիրառուած են հայցի նախնական ապահովման միջոցներ:

ՍԴ Նախկին Նախագահ Զրայր Թովմասեանը Եւ Ընտանիքի Անդամները Կ'անցնին Ապօրինի Ծագում Ունեցող Գոյքի Գործով

Սահմանադրական դատարանի նախկին նախագահ, ՍԴ դատաւոր Հրայր Թովմասեանն ու անոր փոխկապակցուած անձեր՝ Լամարա Խուտաւերտեանը, դուստրերը՝ Մէրի եւ Գոհար Թովմասեանները, ինչպէս նաեւ սոյն գործով այլ անձեր՝ քենին՝ Սոնա Խուտաւերտեանը, ու անոր ամուսինը՝ Ռուսիա բնակող գործարար Ռուբէիկ Ղազարեանը, հրահրուած են ՀՀ Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւն:

Յիշեցնենք, որ ՍԴ դատաւոր Հրայր Թովմասեանի դէմ յեղափոխութենէն յետոյ քրէական գործեր յարուցուեցան:

«Երբ Զգայուն Ժամանակաշրջանին Կը Յայտարարես, Որ ԶԶ-ի Մէջ Ատելութիւն Կայ Արցախցիներու Նկատմամբ, Կ'ան Դուն Անպատասխանատու Ես, Կ'ան Սադրիչ»



Ռուբէն Ստիրակեան

Անցեալ շաբաթ, Մոսկուաբնակ գործարար եւ «Ապրելու Երկիր» կուսակցութեան հիմնադիր Ռուբէն Վարդանեան յայտարարեց թէ, որոշած է հրաժարիլ Ռուսաստանի հպատակութենէն եւ հաստատուիլ Արցախ: Այս առթիւ, ան կատարեց նաեւ շարք մը խնդրայարոյց յայտարարութիւններ:

Պատասխանելով Վարդանեանին «Յանուն Հանրապետութեան» կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Մեհրապեանը ֆէյսպուքեան իր էջով գրած է.

«Երբ որոշում ես արցախցի չլինելով Արցախում բնակուես (իբր), եւ կեանքիդ ճանապարհի այդ հատուածը սկսում ես նրանից, որ էս գագայուն ժամանակաշրջանում յայտարարում ես, թէ բա «Հայաստանում ատելութիւն կայ արցախցիների նկատմամբ», ապա այստեղ կայ երկու տարբերակ կ'ան դու անպատասխանատու խմբի ես, կ'ան սադրիչ, որն ուղարկուած է դրսի ուժերի կողմից պառակտիչ գործունէութիւն ծաւալելու, գումարած կենցաղային մոնոպոլիզութիւնը, որն այդ գործունէութիւնը դարձնում է հնարաւոր: Զգիտեմ իրօք, թէ որ տարբերակն է, չգիտեմ նաեւ, թէ որ տարբերակն է աւելի վտանգաւոր»:

Միջազգային եւ Անվտանգութեան Հարցերու Հայկական Հիմնարկի ղեկավար Ստեփան Սաֆար-



Ռուբէն Վարդանեան

եանը ֆէյսպուքեան իր էջով գրած է.

«Ռուբէն Վարդանեանն այդ որտեղ է հետազոտութիւն անց կացրել «արցախցիների հանդէպ ատելութեան» թեմայով: Արցախին «ատողները» տասնամեակներով հազարաւոր թանկ ու սիրելիներ է ուղարկում հայրենիքի այդ հատուածը պաշտպանելու համար: 4 հազար գոհ է տալիս պատերազմում: Պատերազմից յետոյ համաձայնում է ու չի առարկում, որ կառավարութիւնը միլիտաներ ուղարկի Արցախ՝ անախաղէպ մասշտաբի բնակարանաշինութեան ու կառուցելու համար այն, ինչը «չեն նկատել», որ չի կառուցուել անցեալ տասնամեակներով, կամ առնուազն կառուցուածը բացարձակ համաչափ չի եղել ուղարկածից կերածին ու առանձնատների «մասշտաբների»:

Ռուբէն Վարդանեանի՝ Արցախում ապրելու որոշումը այդ խնդիրը լուծողն է: Եթէ լուծում է, փառք ու պատիւ իրեն: Բայց «լուծման» ու իրավիճակի ախտորոշման միջոց կապը ինչ որ լաւ չի ստացուում: Եւ միթէ արժէք մի քանի մարդու «գզացումներն» այդպէս ընդհանրացնել որպէս Հայաստանում դիտուած ֆենոմեն: Մեղմ ասած, հազարի տարօրինակ է կամ Ռուբէն Վարդանեանը շատ տարօրինակ շրջապատ ունի...:

Աժ Նախկին Պատգամաւոր Մեասնիկ Մալխասեանը Արդարացուած Է

2008-ի մարտիմէկեան դէպքերէն յետոյ «7-ի գործով» դատապարտուած Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Մեասնիկ Մալխասեանը արդարացուած է:

Որոշումը կայացուցած է Երեւանի Ընդհանուր իրաւասութեան դատարանը: Անոր նկատմամբ քրէական հետապնդումը դադրեցուած է, գործի վարոյթը կարճուած է յանցակազմի բացակայութեան հիմքով:

Մեղադրող դատախազը հրաժարած է Մալխասեանին առաջադրուած մեղադրանքէն՝ պատճառաբանելով Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանի՝ այս գործերով կայացուած շարք մը որոշումներ: Ըստ մեղադրողին՝ Եւրոպական դատարանը արձանագրած է, որ մարտիմէկեան ցոյցերը կազմակերպուած չեն եղած, անոնք եղած են ինքնաբուխ եւ հանդիսացած են խօսքի ազատութեան միջոց:



Նախկին պատգամաւոր Մեասնիկ Մալխասեան

Յիշեցնենք, որ Մալխասեանը կը մեղադրուէր զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու համար: Աժ Նախկին Պատգամաւոր Մեասնիկ Մալխասեանը Արդարացուած է:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Համար Երեք Հիմնական Ուղղութիւններն են՝ Խաղաղութիւնը, Կրթութիւնը, Բանակը. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեանն ընդունած է Ազգային ժողովի «ամառային դպրոց» ծրագրի մասնակիցները:

Վարչապետը ողջունած է աշակերտները եւ անդրադարձած՝ կառավարութեան գործունէութեան, կրթութեան ոլորտէն ներս իրականացուող բարեփոխումներուն, Լեռնային Ղարաբաղի Անկախութեան հռչակագրին, Անկախութեան հանրաքուէին եւ այլ հարցերու:

«Գիտէք, որ 1991 թուականի այս օրը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի եւ Շահումեանի շրջանի պատգամաւորներին համատեղ որոշմամբ ընդունուել է Լեռնային Ղարաբաղի Անկախութեան հռչակագիր, Սեպտեմբերի 1-ն էլ՝ Գիտելիքի օրն է: Կարծում եմ, որ այս երկու օրերի յարաբերութիւնը կամ այս երկու օրերի սիմվոլիկան շատ կարեւոր է մեր ապագայի համար: Ինչո՞ւ: Որովհետեւ մենք, ըստ էութեան, խօսում ենք մի ժամանակաշրջանի եւ պրոցեսների մասին, որոնց արդիւնքում, ի վերջոյ, անկախութիւն է հռչակուել Հայաստանի Հանրապետութիւնում»:

Վարչապետը նշած է, որ նախ շատ կարեւոր է իմանալ, ճանաչնալ եւ հասկնալ մեր պատմութիւնը. «Պէտք է հասկանանք՝ ի՞նչ է տեղի ունեցել 1991 թուականի Սեպտեմբերի 21-ից առաջ եւ դրանից յետոյ, ինչո՞ւ է տեղի ունեցել, եւ կարողանանք ճիշտ հետեւութիւններ անել, որն ամենեւին էլ հեշտ գործ է, որովհետեւ պատասխանները նոր հարցեր են բերում: Այս գործընթացը երբեք էլ չի աւարտուում: Շատ յայտնի սասցուածք կայ՝ պատմութիւնից պէտք է դասեր քաղել, բայց ինչ դասեր քաղել: Ամէն ինչից էլ պէտք է դասեր քաղել՝ պատմութիւնից էլ է պէտք դաս քաղել, դասից էլ է պէտք դաս քաղել, կեանքից էլ է պէտք դաս քաղել, քաղած դասից էլ է պէտք դաս քաղել: Բայց յատկապէս՝ ինչ դաս պիտի քաղենք: Ամենաբարդը դա է, եւ երեւի ամենաշողակները նրանք են, ովքեր, իրօք, կարողանում են քաղել, որովհետեւ պատմութեան դաս չէ, որ մի տեղ դարակում դրուած է»:

Կառավարութեան ղեկավարի

Հայաստան Հրախրուած է Եւրոմիութեան Ոչ-Պաշտօնական Գագաթաժողովին

«Հայաստանը հրաւէր ստացած է՝ մասնակցելու Հոկտեմբերին Փրակի մէջ կայանալիք Եւրոմիութեան ոչ-պաշտօնական գագաթաժողովին», յայտարարած է Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշէլը:

Հանդիպման ընթացքին կը նախատեսուի քննարկել «Եւրոպական քաղաքական համայնքի» ստեղծման գաղափարը՝ համագործակցելու այն երկիրներուն հետ, որոնք կը գիտարկեն ԵՄ-ին հնարաւոր անդամակցութեան տարբերակը:

Հրաւիրուած միւս երկիրներու շարքին են Նորվեգիան եւ Զուիցերիան, ԵՄ-ին միանալ փափաքող ինը երկիր, այդ շարքին՝ Ուքրանիան, Մոլտովան, Վրաստանը, արեւմտապալեանական վեց երկիրները եւ Ատրպէյճանը:

Գագաթաժողովին թուրքիոյ

խօսքով՝ իր համար ամենակարեւոր հետեւութիւնն այն է, որ պէտք է աշխատանքները պլանաւորել. «Ես ուզում եմ վերադառնալ 90-ականների սկիզբ եւ փորձել գտնել նախագիծ, թէ արդեօք մենք պլանաւորել ենք՝ ինչպիսին ենք ուզում տեսնել Հայաստանը 2000, 2005, 2010, 2015 2020, 2022 թուականներին. այդպիսի նախագիծ մենք, անկեղծ ասած, չենք ունեցել: Հիմա արդեօք մենք ունենք նախագիծ, թէ ինչպիսին ենք ուզում տեսնել Հայաստանը 2050 թուականին: 2020 թուականի Սեպտեմբերի 21-ին ես ներկայացրեցի Հայաստանի վերափոխման ռազմավարութիւնը, որը չեմ ասի, բնականաբար, թէ կատարեալ փաստաթուղթ է, բայց, յամենայնդէպս, դա փորձերից մէկն է պլանաւորել, թէ ինչպիսին ենք ուզում տեսնել Հայաստանը 2050 թուականին: Եւ կարծում եմ՝ ապագայի պլանաւորումը նաեւ այն է, որ մեզ պէտք է օգնի դասեր քաղել անցեալից եւ այսօր ապրելու հնարաւոր ստանալ»:

Նիկոլ Փաշինեան ընդգծելով ապագայի մասին պատկերացումները, ըսած է. «Ապագան ընդհանրապէս շատ պարամետրերից է կախուած, բայց ցանկացած գործում, կարծում եմ, պէտք է ընդգծել առաջնահերթութիւնները, որովհետեւ անելիքներն այնքան շատ են, որ դրանց մէջ միշտ կարելի է խճճուել, եւ ժամանակն էլ քիչ է պլանաւորելու համար: Ուստի շատ կարեւոր է ընդգծել առաջնահերթութիւնը: Եւ եթէ ինձ հարցնէք՝ որն եմ համարում առաջնահերթութիւնն այդ առումով տեսանելի ապագայում Հայաստանի համար, ես 3 հիմնական ուղղութիւն կը նշեի. առաջինը՝ խաղաղութիւնը, երկրորդը՝ կրթութիւնը, երրորդը՝ բանակը: Կարող է թուալ, թէ առաջինն ու երրորդը հակասում են իրար, բայց իրականում չեն հակասում, որովհետեւ կառավարութեան ծրագրի մէջ նաեւ մենք ընդգծել ենք, որ Հայաստանին ուժեղ բանակ պէտք է ոչ թէ ազդեւոր գործողութիւններ իրականացնելու համար, այլ մեր երկրի ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու համար»:

Միրզոյեանը Լաւրովի Հետ Զրոյցին Ընդգծած է Հայ Գերիներու Շուտափոյթ Հայրենադարձը



Հայաստանի եւ Ռուսաստանի արտաքին գործերու նախարարներ՝ Արարատ Միրզոյեան եւ Սերկէյ Լաւրով կը հանդիպին Մոսկուայի մէջ

Սեպտեմբեր 5-ին աշխատանքային այցով Մոսկուա գտնուող ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը հանդիպած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրովի հետ:

Զրուցակիցները քննարկած են տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան խնդիրները լայն շրջանակ: Միտքեր փոխանակուած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանագամայն եւ սահմանային անվտանգութեան հարցերու, տարածաշրջանին մէջ տնտեսական եւ ճանապարհային ենթակառուցուածքներու ապաշրջափակման աշխատանքներուն վերաբերեալ:

Հանգամանալից անդրադարձ կատարուած է Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններու կարգաւորման, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերող հարցերու:

Արարատ Միրզոյեանը կարեւորած է ռուսական կողմին ջանքերը, այդ շարքին՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան շրջանակներուն մէջ՝ ուղղուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան տեւական եւ համապարփակ կարգաւորման:

ԼՂ Հակամարտութիւնը Կարելի Զէ Լուծուած Համարել, Քանի Դեռ Զեն Հասցեագրուած Արցախահայութեան Կարիքները. ՀՀ ԱԳՆ

ՀՀ Արտաքին Գործերու Նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է Արցախի Հանրապետութեան հռչակման 31-ամեակին առիթով:

«1991 թվ Սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի եւ Շահումեանի շրջանի բոլոր մակարդակների պատգամաւորներին համատեղ նստաշրջանն ընդունեց Լեռնային Ղարաբաղի անկախութեան հռչակագիրը:

Այս քայլն Ատրպէյճանական ԽՍՀ-ի կողմից հայերի դէմ ցեղային գտնամաների քաղաքականութեան տրամաբանական հետեւանքն էր, ինչի դրսեւորումները առկայ են նաեւ այսօր:

Հակառակ Ատրպէյճանի իշխանութիւնների կողմից մշտապէս հնչող այն յայտարարութիւններին, թէ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր եւ Լեռնային Ղարաբաղ տարածքային միաւոր այլեւս գոյութիւն չունեն՝ փաստ է, որ Լեռնային Ղարաբաղում շարունակուած են բնակուել շուրջ հարիւր քսան հազար հայեր, որոնք, որպէս միջազգային հանրութեան անդամ,

Կարեւորուած է Լեռնային Ղարաբաղի մէջ ռուսական խաղաղապահ զօրախումբին դերակատարութիւնը՝ հակամարտութեան գօտիին մէջ զինադադարի ամրապնդման եւ սադրանքներու կանխման, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան անվտանգութեան եւ կենսագործունէութեան պայմաններու ապահովման գործին մէջ:

Անդրադառնալով 44-օրեայ պատերազմին հետեւանքով յառաջացած մարդասիրական խնդիրներուն՝ Արարատ Միրզոյեանը ընդգծած է հայ ռազմագերիներու եւ այլ պահուող անձերու շուտափոյթ հայրենադարձման, ինչպէս նաեւ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ հայկական պատմամշակութային ժառանգութեան պահպանման անհրաժեշտութիւնը:

Նախարարներ Միրզոյեանն ու Լաւրովը քննարկած են Ռուսիոյ Դաշնութեան նախագահին՝ Հայաստան նախատեսուած պետական այցի ու Երեւանի մէջ կայանալիք ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի նստաշրջանի կազմակերպման ընթացքը:

ունեն հաւասար եւ անօտարելի իրաւունքներ, եւ հակամարտութիւնը չի կարելի լուծուած համարել, քանի դեռ չեն հասցեագրուել արցախահայութեան խորքային կարիքները:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան անվտանգութեան եւ իրաւունքների երաշխաւորումը եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան համապարփակ եւ երկարաժամկէտ լուծումը՝ օգտագործելով ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան փորձը եւ ներուժը, շարունակուած են առանցքային լինել Հարաւային Կովկասում կայունութեան եւ խաղաղութեան հասնելու ճանապարհին:

Հայաստանի Հանրապետութիւնը շարունակում է յանձառու լինել Արցախի բնակչութեան կենսագործունէութեան համար անհրաժեշտ բոլոր պայմանների ապահովման եւ իրենց բնօրրանում անվտանգ ապրելու համար», ըսուած է ՀՀ Արտաքին Գործերու Նախարարութեան յայտարարութեան մէջ:

«Սթարմուս» Փառատօնի Պաշտօնական Բացման Հանդիսաւոր Արարողութիւնը



«Սթարմուս» միջազգային փառատօնի բացման հանդիսութիւնը

Սեպտեմբեր 5-ին Երեւանի մէջ կատարուեցաւ գիտութեան եւ երաժշտութեան «Սթարմուս» միջազգային փառատօնին պաշտօնական մեկնարկը: Փառատօնի առաջին օրը տեղի ունեցան տարբեր հանդիպում-դասախօսութիւններ ՀՀ քանի մը բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մէջ, իսկ օրը աւարտեցաւ փառատօնի պաշտօնական բացման հանդիսաւոր արարողութեամբ:

«ԵՊՀ-Սթարմուս Նոպէլեան Շաբաթ» դասախօսութիւնը առաջիններէն էր փառատօնի շրջանակին մէջ իրականացուող միջոցառումներէն: ԵՊՀ-ն հիւրընկալած էր Նոպէլեան մրցանակի դափնեկիր աստղաբանագէտ Քրիսթոֆերին եւ արուեստագէտ, նկարչուհի Լիա Հալոբանին: Անոնք ներկայացուցած են սեւ խոռոչներու վերաբերեալ իրենց ուսումնասիրութիւնները եւ արուեստի դերը գիտութեան զարգացման գործին մէջ:

Փառատօնի շրջանակին մէջ դասախօսութիւններով հանդէս եկան նաեւ ԹՈՒՄՕ կեդրոնին մէջ «Astronomy» ամսագրի գլխաւոր

խմբագիր Տէյվիտ Աքբըրը, Ռուս-հայկական համալսարանին մէջ՝ աստղաբանագէտ, մոլորակագէտ եւ Հարաւարեւմտեան հետազօտական հիմնարկի Պոլտըր գրասենեակի տնօրէն Ժոէլ Փարբըրը, Ազգային փոլիթեքնիք համալսարանին մէջ՝ Նակին Գոքսը:

Երեկոյեան մեկնարկեց «Սթարմուս» փառատօնի բացման հանդիսաւոր արարողութիւնը՝ աննախադէպ համերգային ծրագրով՝ Ռիք Ուէյքմանի, Սերժ Թանկեանի, Sons of Apollo մեկախումբի, Անտրէ Մաքարելիչի, Տիգրան Համասեանի, Քրիս Հետֆիլտի եւ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախումբին մասնակցութեամբ: Համերգի ընթացքին տեղի ունեցաւ նաեւ Սթիվըն Հոքինկի շքանշանի յանձնման հանդիսաւոր արարողութիւնը: Սթիվըն Հոքինկի շքանշանը այս տարի առաջինը շնորհուած է Պրայըն Մէյին գիտութիւնը հանրայնացնելու գործին մէջ ներդրումի համար: Հոքինկի երկրորդ շքանշանը շնորհուած է բանաստեղծ եւ նախնաւոր լիւթ Տայան Աքբըրմանին:

Սիւնիքով ճանապարհ Կրնանք Տալ Միայն ՀՀ-ի Կողմէ Անձնագրային Եւ Մաքսային Ստուգման Ընթացակարգերով. Էտմոն Մարութեան

Պետրոս Ղազարեանի հետ հարցազրոյցին ընթացքին ՀՀ յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էտմոն Մարութեան խօսած է Ալիեւ-Փաշինեան-Շարլ Միշէլ պրիւքսէլեան հանդիպումի մասին:

Անդրադառնալով քննադատութիւններուն, թէ անդրադարձ չկայ Արցախին եւ ոչ ալ ճանապարհային հաղորդակցութիւններու եւ միջանցքի բացման՝ Մարութեանը նախ ընդգծած է, որ միջանցքի մասին քննարկում գոյութիւն չունի: «Մենք չենք մտնում միջանցքային տրամաբանութեան որեւէ քննարկման մէջ: Հայաստանն ասել է, որ պատրաստ է ճանապարհները բացել երեք ուղղութեամբ, եւ արդէն շրջանառութեան մէջ է դրուել երեք անցակէտեր դնելու մասին օրինագիծը: Ինչ վերաբերում է իրենց պատկերացրած ճանապարհին, Հայաստանի մօտեցումը հետեւեալն է. մենք կարող ենք ճանապարհ տալ, ՀՀ օրէնսդրութեան համաձայն, անձնագրային եւ մաքսային ստուգման ընթացակարգերով, բայց Ատրպէյճանն այդ հարցում համաձայնութեան չի գալիս եւ շարունակում է տարբեր հար-



ՀՀ յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էտմոն Մարութեան

թակներում ու առիթներով բարձրացնել միջանցքի հարցը, ինչը Հայաստանի համար չի կարող ընդունելի լինել», ըսած է ան:

Ինչ կը վերաբերի Արցախի հարցին անդրադարձի բացակայութեան, Մարութեանի պարզաբանմամբ, այդ պայմանաւորուած է անով, որ հարցին վերաբերեալ որեւէ համաձայնութիւն չէ եղած, բայց այն, որ Լեւոնային Ղարաբաղի մասին խօսուած է, յստակ նշուած

Հայաստանն Ու Արցախը Անցած Են Ծանր Պայքարի Բովով, Եւ Այդ Պայքարը Դարձած Է Արցախի Հայկական Մնալու Գրաւականը. Վահագն Խաչատուրեան

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեան ուղերձ յղած է Արցախի Հանրապետութեան հռչակման 31-ամեակին առթիւ:

«Սիրելի հայրենակիցներ, 1991 թ. Սեպտեմբերի 2-ին ընդունուեց Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակագիրը՝ սկիզբ դնելով մի գործընթացի, որը նախեալ միտուած էր Լեւոնային Ղարաբաղի բնակչութեան անվտանգութեանն ու իր հայրենիքում ապրելու անքակտելի իրաւունքների երաշխաւորմանը:

Այս տարեդարձը մենք այսօր դիմաւորում ենք բարդագոյն ժամանակահատուածում՝ Արցախեան 44-օրեայ պատերազմից յետոյ ստեղծուած դժուարին իրավիճակում, երբ դեռ չեն սպիացել պատերազմի անդառնալի կորուստների վէճքերը, երբ մեր առաջնահերթ հարցերը շարունակում են մնալ արցախահայութեան անվտանգութեան ապահովմանն ու խաղաղ ապրելու իրաւունքի անձեռնմխելիութիւնը:

Նոր պատերազմի սպառնալիքի, Արցախի կարգավիճակի, ընկերատնտեսական ու մարդասիրական հարցերը Հայաստանի եւ Արցախի մշտական օրակարգային առաջնահերթութիւններն են: Դրանք չեն կարող լուծուել առանց քաղաքականապէս եւ տնտեսապէս ուժեղ, զարգացած, Հայաստանի գոյութեան, առանց առկա ներուժի լիարժէք օգտագործմանն ու մեր միջազգային գործընկերների հետ արժանապատիւ ու ամբողջական համագործակցութեան, առանց միջազգային իրաւունքների ու մարդասիրական կանոնների երաշխա-



ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեան

ւորմամբ:

Մեր ժողովուրդն այսօր կրկին կանգնած է նոր մարտահրաւերների առաջ, որոնք կարող ենք յաղթահարել տոկունութեամբ, միասնական ջանքով, համագոյն ներուժի գիտակցմամբ ու համախմբումով:

Հայաստանն ու Արցախն անցել են ծանր պայքարի բովով եւ հէնց այդ պայքարն է դարձել Արցախի հայկական մնալու, արցախցու՝ իր հայրենիքում ապրելու եւ արարելու գրաւականը:

Այսօր մենք խոնարհուում ենք յանուն Արցախի իրաւունքների ու պաշտպանութեան համար զոհուած մեր հայրենակիցների յիշատակի առաջ եւ յանձնառու ենք կայուն եւ յարատեւ խաղաղութիւն՝ Հայաստանի, Արցախի ու մեր տարածաշրջանի համար», ըսուած է Խաչատուրեանի ուղերձին մէջ:

Մինչեւ Տարեկըջ Տրամադրուած Ենք

Շարունակուած էջ 1-էն

դիպման մասնակիցները: Խմբակցութեան հետ հանդիպման ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնած է, որ մինչեւ տարեկըջ տրամադրուած են խաղաղութեան պայմանագիր կնքելու:

Վարչապետ Փաշինեան մանրամասնութիւններ յայտնելով Օգոստոս 31-ի եռակողմ հանդիպումէն, կառավարութեան նիստին ժամանակ նշեց, որ Պրիւքսէլի մէջ քննարկումը ծաւալուն եղած է:

«Քննարկումը հեշտ չէ, բայց ես ուզում եմ նաեւ արձանագրել, որ մեր նպատակադրումները շարունակում են մնալ եւ պիտի շարունակեն մնալ այնպիսին, ինչի մասին ես յայտարարել եմ», ըսաւ Փաշինեան:

Վարչապետը ընդգծեց, որ ՀՀ կառավարութիւնը որդեգրած է խաղաղութեան օրակարգը, եւ այստեղ ալ վճռականութիւն անհրաժեշտ է այդ օրակարգը կեանքի կոչելու համար:

«Մենք պէտք է բոլորս հասկանանք, որ դա հեշտ չէ եւ պարզ չէ, եւ հնարաւոր լուծումներն էլ ակնյայտ չեն», աւելցուց Փաշինեան:

Վարչապետը անհրաժեշտ կը համարէ շարունակել հետեւողական աշխատանքը. «Անհրաժեշտութիւն է, եւ ժողովրդի ցանկութիւնն է, որ օր առաջ մեր տարածաշրջանում հաստատուի տեւական եւ համապարփակ խաղաղութիւն: Եւ մենք պէտք է աւելի ու աւելի շատ կեդրոնանանք այս խնդրի լուծման վրայ», եզրափակեց Փաշինեան:

Fitch Ratings-ը Չզալիօրէն Բարելաւած Է

Շարունակուած էջ 1-էն

թեան մասնագէտներ են, յատկապէս տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտին մէջ:

Գործակալութիւնը Հայաստանի համար ՀՆԱ-ի աճ կանխատեսած է 6,4%՝ 2022 թուականին եւ մինչեւ 4,7%՝ 2023-2024 թուականներուն: Fitch Ratings-ը այս տարուան Մարտին իր նախորդ կան-

խատեմամբ Հայաստանի ՀՆԱ-ի աճը 2022 թուականի վերջաւորութեան կանխատեսած էր 1,3%:

Գործակալութիւնը որպէս բացասական գործօն կը նշէ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններու վատթարացման վտանգները, որոնք կ'ազդեն երկրին տնտեսութեան վրայ, սակայն չի կանխատեսուել նաեւ, որ անոնք լուրջ հետեւանքներ կ'ունենան:

է կառավարութեան հաղորդագ-

րութեան մէջ:

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը Կը Ներկայացնէ 2022-2023 Տարեշրջանի Կրթանպաստներու Արժանացած Ուսանողները

Շարունակուած էջ 1-էն

ներ ընտրուեցան Միացեալ Նահանգներէն, իսկ երկուքական հոգի Հայաստանէն եւ Լիբանանէն:

Ամերիկահայ ուսանողներու մրցանակներու յանձնումը տեղի ունեցաւ Կիրակի, Օգոստոս 14-ին, հանգանակային նախաճաշի մը ընթացքին, Միութեան Փաստօրինայի կեդրոնէն ներս ՀԿԲՄ-ի բարերարներու, համակիրներու եւ ուսանողներու ընտանիքի անդամներու ներկայութեամբ:

Ներկաներուն ողջունեց Յանձնախումբի անդամ եւ միջոցառման հանգիստավար տիկին Քաթիա Քրմոյեան-Խոտանեան: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլորի ներկայութեան եւ ապա հրաւիրեց բոլորը Brunch/ նախաճաշի գեղեցիկ սեղանին:

Պաշտօնական արարողութիւնը սկսաւ տիկին Քրմոյեան-Խոտանեան ներկայացնելով ՀԿԲՄ-ի առաքելութեան հակիրճ պատմութիւնը եւ կրթանպաստներու հիմնադրամի գլխաւոր նպատակները:

Ապա, ջութակի կատարումով ելոյթ ունեցաւ երիտասարդ եւ խոստմնալից արուեստագէտ՝ Տիգրան Մելիքեանը՝ նուագելով Պախի Minuets 1 and 2 from Partita No. 3 կտորը:

Դոկտ. Լինտա Կէրկէրեան-Մկրտիչեան հմայեց ներկաները՝ ասմունքելով Համօ Սահեանի «Տարիներ» բանաստեղծութիւնը:

Օրուայ գլխաւոր բանախօսն էր Նորթրիճ համալսարանի քիմիայի փրոֆ., գիրքերու հեղինակ՝ Դոկտ. Գագիկ Մելիքեան: Ան իր ելոյթին մէջ խօսեցաւ հայերու բացակայութեան Ամերիկեան բարձր քաղաքական բեմէն, գիտահետազոտական կեդրոններէն եւ համալսարաններէն ներս: Փրոֆ. Մելիքեանի կարծիքով հայկական ներկայութիւնը՝ այդ կեդրոններէն ներս ընկերային ու քաղաքական մեծ ազդեցութիւն պիտի ունենայ մեր

ժողովուրդին վրայ: Դոկտ. Մելիքեանի բարձրացուցած հարցերը խորհրդածելու առիթ կը ծառայեն ուսանողներուն:

Այնուհետեւ պարգեւատրման արարողութիւնը ղեկավարեց Յանձնախումբի անդամ՝ Դոկտ. Ռոզին Տէր-Դաւիթեան: Անդրադառնալով ՀԿԲՄ-ի տեսլականին՝ բարելաւելու երիտասարդութեան կեանքը ուսման միջոցաւ, ան բացատրեց, թէ Կրթանպաստներու Հիմնադրամի գլխաւոր նպատակն է խրախուսել երիտասարդները բարձրագոյն կրթութիւն ստանալու եւ հայ համայնքի կեանքէն ներս ծառայելու:

ՀԿԲՄ-ի 2022-2023 կրթանպաստներուն արժանացան հետեւեալ ուսանողները.

Միացեալ Նահանգներ.

Մարալ Գուրգէնեան - GPA 4.02

Յաճախելով Սանթա Պարալայի համալսարանը՝ Մարալ կ'ուսանի նախաքիմիայ՝ նպատակ ունենալով ուսումը շարունակել բժշկութեան, մասնաւորապէս դեղագործութեան մէջ:

Ան գործնական մասնակցութիւն ունեցած է յատկապէս Վէն Նայի Սուրբ Պետրոս եկեղեցու բարեսիրական աշխատանքներուն մէջ:

Գրիգոր Մազմանեան, Սիերա Մաորէ, Քալիֆորնիա -GPA 4.4

UCLA համալսարանէն ներս Գրիգոր պիտի մասնագիտանայ էլեկտրաճարտարագիտութիւն ճիւղին մէջ: Գրիգոր անդամակցած է Փաստօրինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու երիտասարդական միութեան եւ ՀԲԸՄ-ի սկաուտներուն:

Քարինա Մեսսերլեան, Ֆրեզնո, Քալիֆորնիա - GPA 4.3

Յաճախելով Ֆրեզնոյի Քալիֆորնիա Նահանգային համալսարանի Քարինա պիտի հետեւի Liberal studies ճիւղին: Ան եղած է ՀՄԸՄ-ի սկաուտ նաեւ մարզիկ եւ անդա-

մակցած է Ֆրեզնոյի Սուրբ Երրորդութիւն եկեղեցու երիտասարդական շարժումին:

Էտկար Սահակեան, Նորթ Հիլզ, Քալիֆորնիա, ԱՄՆ - GPA 4.5

UCLA համալսարանի հոգեբանութեան 3-րդ տարուայ ուսանող: Էտկար եղած է Գէորգեան պարարուեստի ակադեմիայի անդամ, ղեկավար եւ ճամբարի խորհրդատու: Սահակեան կը գործէ Համալսարանի մէկէ աւելի ուսանողական միութիւններէն ներս եւ կ'անդամակցի UCLA-ի Հայ Ուսանողներու Միութեան:

Մէլսին Թոփուզեան, Ֆրեզնո, Քալիֆորնիա - GPA 4.22

Յաճախելով Ֆրեզնոյի Նահանգային համալսարան ան պիտի հետեւի Liberal studies ճիւղին: Մէլսին եղած է Հայ եկեղեցու երիտասարդական կազմակերպութեան անդամ: Ան մասնակցած է բազմաթիւ ծրագրերու, որոնցմէ վերջինը արցախեան պատերազմի մասնակից զինուորներուն ի նպաստ հանգանակութեան:

Հայաստան եւ Լիբանան.

Յաւաջիկայ շաբաթներուն ՀԿԲՄ-ի կրթանպաստները պիտի յանձնուին Հայաստանի եւ Լիբանանի ընտրեալ ուսանողներուն Երեւանի եւ Պէյրութի տեղական մաս-

նաճիւղերուն միջոցաւ:

Արուսեակ Սերոբեան, Երեւան, Հայաստան

Սովորելով Երեւանի Պետական համալսարանի Ֆինանսական/տնտեսագիտական գոյէնը պիտի ուսանի վարչագիտութիւն:

Միսակ Գուլումեան, Երեւան, Հայաստան

Յաճախելով Հայաստանի Ամերիկեան համալսարան՝ Գուլումեան ընտրուած է փաստաբանութեան մագիստրոս ծրագիրին:

Կատիա Նորշահեան, Պուրճ Համուտ, Լիբանան

Յաճախելով Լիբանանի Ամերիկեան համալսարանը ան պիտի մասնագիտանայ հիւանդապահութեան ճիւղին մէջ: Նորշահեան շրջանաւարտ է Պէյրութի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոյէնէն:

Կարինէ Թանկեան, Պէյրութ, Լիբանան

Կարինէ Թանկեան կ'ուսանի Լիբանանի Ամերիկեան համալսարանէն ներս մասնագիտանալով հիւանդապահութեան ճիւղին մէջ: Ան շրջանաւարտ է Պէյրութի Սահակեան Լեւոն-Մկրտիչեան Գոյէնէն:

Լրացուցիչ տեղեկութիւններու եւ կամ նուիրաբերելու համար այցելել մեր կայքը՝ www.aebu.org:

Հայաստանի Տնտեսութեան Բարելաման Միտումները

Շարունակուած էջ 1-էն

նաջընթաց: Միայն Օգոստոս ամսուն Հայաստան այցելած է 260 հազար զբոսաշրջիկ, որոնց 63% ժամանած են «Ձուարթնոց» օդակայանի միջոցաւ:

Այլ ուշագրաւ տուեալներով՝ արդիւնաբերական արտադրանքի ծաւալը այս տարուան Յունուար-Յունիսին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 7 տոկոսով:

Շինարարութեան ծաւալը 2022-ի Յունուար-Յունիսին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 13.6 տոկոսով:

Առեւտուրի շրջանառութեան գծով 2022-ի առաջին 7 ամսուան մէջ 2021-ի նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցումը կազմած է 12.5 տոկոս:

Հայաստանի մէջ այս տարուան Յունուար-Յունիսին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցած է 27.5 տոկոսով:

Միակ ոչևարական ցուցանիշը սպառողական ապրանքներու սղածն է, որ բարձրացած է 6.3 տոկոսով: Այս սակայն իւրայատուկ է Հայաստանին: Աշխարհի գրեթէ բոլոր երկիրները կը դիմագրաւեն նոյն խնդիրները, որոնք հետեւանք են համապարկին եւ Ռուսկուքրանական պատերազմին:

Տնտեսական այս բարելաւումն բարեբախտաբար բաժին կը հասնի նաեւ Հայաստանի տարեց եւ թոշակառու խաւին: Կառավարութեան վերջին նիստերէն մեկուն ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, քանի որ բաւականին լաւ տնտեսական ցու-

ցանիշներ արձանագրուած են եւ հարկային եկամուտները գերկատարուած է աւելի քան 70 միլիարդ դրամով (շուրջ 150 միլիոն տոլար), որոշուած է, 2023-ի Յունուարի 1-էն նախատեսուած կենսաթոշակներու բարձրացումը իրականացնել 2022-ի Սեպտեմբերի 1-էն սկսեալ:

Հայաստանի կառավարութիւնը նաեւ կը յայտնէ որ, կարելի չէ հանդուրժել ուսուցիչներուն եւ դաստիարակներուն վճարուող ծիծաղելի աշխատավարձերը եւ անոնք եռապատկելու գործընթաց սկսած է:

Նախապէս յայտարարուած էր աշխատավաճերու բարձրացման եւ իւրաքանչիւր նորածին երեխային համար յաւելեալ գումար յատկացնելու մասին:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան վերջերս յայտարարեց նաեւ որ, կառավարութիւնը որպէս նուիրատուութիւն ստացած է Ձանգեգուրի պղինձի գործարանի եւս 6.8 տոկոսը, պետութեան բաժնեմասը հասցնելով 21.875 տոկոսի:

Այս բոլոր զարգացումները արդիւնք են, ո՛չ միայն արտաքին ազդակներու, այլ եւ պետութեան վարած տնտեսական ճիշդ քաղաքականութեան ու յատկապէս մատուցուած կառավարման, որուն շնորհիւ տնտեսական բարելաւումները կը հասնին ժողովուրդին, փոխանակ անցեալի մասն երթալու օրուայ իշխանաւորներու անձնական գրպանին:

Պարզ է որ, փտածութիւնը (կոռուպցիան) ամբողջութեամբ չէ վերացած սակայն այդ դարձած է համակարգային բնոյթ կրելէ, որմէ պիտի շահին միայն Հայաստան պետութիւնն ու անոր քաղաքացիները:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Շուուն Պէտք է Շարունակուի՞

Շարունակուած էջ 2-էն

ղացաւ դառնալ քաղաքապետ, բայց հիմա, երբ վարչապետն իրեն հեռացրեց այդ պաշտօնից, վերադառնալ քաղաքականութիւն՝ դերասանական խաղով, շատ աւելի բարձր խնդիր կը լինի: Իսկ ընդհանրապէս՝ մասնագիտութեան միջոցով՝ դերասանական արուեստով կամ լրագրութեամբ, իշխանութեան հասնելու համար պայքարելը նորմալ է, մարդկութեան պատմութեան մէջ նման դէպքերը բազմաթիւ են: Ամբողջ խնդիրն այն է, թէ արդեօք մարդը, իշխանութեան գալով, շարունակուած է մնալ դերասան կամ լրագրող, թէ դառնում է պետական գործիչ: Ձեւենակին այդ առումով դրական օրինակ է: Նա դարձել է իրական ազգային առաջնորդ, որը Ռուսաստանի ազդեցիկ պայմաններում կարողացել է ուկրաինացիներին համախմբել՝ որպէս քաղաքական ազգ, որի մէջ մտնում են էթնիկ ուկրաինացիները, ռուսները,

ըր, հայերը, հրէաները եւ այլք:

Հայաստանի ներկայիս վարչապետը՝ հակառակը, շարունակուած է գործել որպէս սպեցիֆիկ ժանրի լրագրող, որին առաջին հերթին հետաքրքրում են սկանդալները, սենսացիոն բացայայտումները, կոմպրոմիսները: Յիշու՞մ էք, թէ ինչպիսին էր արձագանքը, երբ նոյն Հայկ Մարութեանը փորձեց որոշակի ինքնուրոյնութիւն դրսեւորել: Միանգամից «սարսափելի կ'ոմպրոմիս» հրապարակուեց՝ քաղաքապետը, պարզու՞մ է, հանդիպել էր Սեյրան Օհանեանի հետ: Դա լրագրողի պատասխանն էր դերասանին:

Միանգամայն սպասելի է, որ իշխանութեան եւ ընդդիմութեան քարոզիչները միահամուռ եւ մօտաւորապէս նոյն փաստարկներով կը սկսեն քարկոծել նախկին քաղաքապետին: Բայց այդ փորձութեանը, կարծում եմ, պարոն Մարութեանը կը դիմանայ:

«ԱՌԱՒՕՏ»

Armenian and Azerbaijani Leaders Meet in Brussels Agree to Intensify Discussions on Armenian-Azerbaijani Peace Treaty "Talks With Aliyev Was Extensive but Difficult" Says PM Pashinyan

BRUSSELS — The leaders of Armenia and Azerbaijan reportedly agreed to intensify discussions on an Armenian-Azerbaijani peace treaty when they met again in Brussels on Wednesday for talks hosted by European Council President Charles Michel.

It was their third trilateral meeting in five months held in the Belgian capital. It lasted for about four hours.

"Today we agree to step up substantive work to advance on the peace treaty governing inter-state relations between Armenia and Azerbaijan and tasked the Foreign Ministers to meet within one month to work on draft texts," Michel said in a statement released after the meeting.

The Armenian government likewise said that the two ministers will meet before the end of September to "continue substantive negotiations" on the peace accord sought by Azerbaijan.

Michel also said on Wednesday that he, Aliyev and Pashinyan "reviewed progress" on ongoing efforts to restore Armenian-Azerbaijani transport links and demarcate the border between the two South Caucasus



states.

"We agreed that the next meeting of the [Armenian-Azerbaijani] Border Commissions will take place in Brussels in November," added the head of the European Union's top decision-making body.

Pashinyan and Aliyev will themselves meet again in Brussels "by the end of November," while their deputy prime ministers, who chair a joint border delimitation commission, will also

meet in the unofficial European capital "in November," Michel said.

Talks with Aliyev not Easy

Pashinyan described his latest talks with Aliyev as "not easy" but gave no other details on Thursday.

"The discussion was extensive, the discussion was not easy," he said the day after the talks hosted by Euro-

Continued on page 3

Pashinyan, Putin Discuss Bilateral Ties, Regional Developments

VLADIVOSTOK -- Russian President Vladimir Putin said at a meeting with Armenian Prime Minister Nikol Pashinyan on Wednesday in Vladivostok that relations between Armenia and Russia are developing in all directions

"Our relations are developing in all directions. Russia confidently maintains the first place among Armenia's trade and economic partners. Trade turnover has recently increased by approximately 25-30 percent. We really notice economic stabilization in Armenia. Your government has done a lot in that direction," the Russian President said during the meeting on the sidelines of the 7th Eastern Economic Forum (EEF).

"Of course, one of the most sensitive issues is the security situation around Nagorno-Karabakh. We are in constant contact," Putin said.

According to the Russian leader, relations between the two countries

Continued on page 3

As Artsakh Commemorated 31st Independence Day Armenian Caucus Calls On Biden Administration To Assist Vulnerable Armenians



WASHINGTON, D.C. — Marking Artsakh's 31st Independence Day, Congressional Armenian Caucus Co-Chair Frank Pallone, Jr. (D-NJ) and Congresswoman Dina Titus (D-NV) were joined by nearly 50 Members of Congress in a bipartisan letter to Secretary of State Antony Blinken and U.S. Agency for International Development (USAID) Administrator Samantha Power, urging them to "take immediate steps dedicating significant resources" to support the vulnerable Armenian population of Artsakh via humanitarian aid. The representatives stressed the "severe hardships" caused by the unprovoked 44-day war

launched by Azerbaijan, and the ongoing aggressions against innocent civilians, in violation of international law.

In addition, the letter states that the U.S. Agency for International Development (USAID) has "acknowledged that over 90,000 refugees displaced to Armenia, the majority of whom are women, children, and elderly, are suffering through an acute humanitarian crisis."

While recognizing that the U.S. government has historically funded landmine and unexploded ordnance clearance efforts, and has dedicated

Continued on page 3

Armenian Educational Benevolent Union Presents 2022-2023 AEBU Scholarship Awards



PASADENA, CA – The Armenian Educational Benevolent Union (AEBU) Scholarship Fund Committee proudly announces its 2022-2023 award recipients in the United States, Armenia, and Lebanon.

The AEBU Scholarship Fund Committee received a large pool of applications from highly qualified candidates nationwide and from overseas. The selection process was rewarding but very challenging. Five (5) recipients in the United States, two (2) recipients in Armenia, and two (2) recipients in Lebanon were selected.

Recipients in the US were presented with their awards on Sunday, August 14, 2022, during a benefit

brunch held at the AEBU center in Pasadena, California in the presence of AEBU Scholarship donors, friends, and family members.

Mrs. Katia Kermoyan-Khodanian, committee member and the event's master of ceremony, welcomed the attendees to the 4th annual scholarship awards ceremony and invited everyone to the beautiful brunch.

The formal ceremony began with a brief history of the mission of the AEBU in general and the Scholarship Fund in specific by Mrs. Kermoyan-Khodanian which was followed by a violin performance by Dikran Melikian,

Continued on page 4

Armenian, Russian FMs Discuss Regional Security Issues, Bilateral Ties During Moscow Meeting



MOSCOW — Armenian Foreign Minister Ararat Mirzoyan met with Russian Foreign Minister Sergey Lavrov in Moscow on Monday.

Ararat Mirzoyan and Sergey Lavrov discussed in detail a number of issues related to the further development of the Armenian-Russian strategic partnership and allied relations, including cooperation in trade, economy, scientific and cultural spheres.

Noting that this year marks the 30th anniversary of diplomatic relations between Armenia and Russia and the 25th anniversary of the Treaty of Friendship, Cooperation and Mutual Assistance, the parties hailed the active dialogue established at the highest levels, the cooperation within CSTO, EAEU, CIS and other international organizations.

The interlocutors discussed a wide range of issues of regional security and stability. Thoughts were exchanged on issues of border demarcation and border security between Armenia and Azerbaijan, work on unblocking economic and transport infrastructures in the region.

Issues related to the settlement of Armenia-Azerbaijan relations and the Nagorno Karabakh conflict were touched upon.

Ararat Mirzoyan emphasized the efforts of the Russian side, including within the co-chairmanship of the OSCE Minsk Group, aimed at the lasting and comprehensive settlement of the Nagorno-Karabakh conflict.

The importance of implementing the agreements reached by the tripartite statements of November 9, 2020, January 11, 2021 and November 26 was reaffirmed.

The role of the Russian peacekeeping force in Nagorno Karabakh in strengthening the ceasefire regime in the conflict zone and preventing provocations, ensuring the safety and living conditions of the Armenian population of Nagorno Karabakh was emphasized.

Referring to the humanitarian problems caused by the 44-day war, Ararat Mirzoyan emphasized the need for the soonest repatriation of Armenian prisoners of war and other detained persons, as well as the need to preserve the Armenian historical and cultural heritage in the territories under the control of Azerbaijan.

Ministers Mirzoyan and Lavrov discussed the process of organization of the scheduled state visit of the President of the Russian Federation to Armenia and the CSTO Collective Security Council session to be held in Yerevan.

Armenia-Karabakh Alternative Road Opens Bypassing Berdzor



YEREVAN — Traffic between the Republic of Artsakh and the Republic of Armenia is now carried out through an alternative route, bypassing the city of Berdzor.

The new Stepanakert-Goris route, which starts from the intersection of Berdadzor sub-district of Shushi region, is in operation from 20:00, August 30.

Russian peacekeepers have been deployed along the road. The traffic police of the Ministry of Internal Affairs and rescuers of the State Emergency Service of the Republic of

Artsakh also perform an enhanced service here, monitoring the safe entry and exit of citizens.

Karabakh's top leaders were reportedly the first to inspect and use the new highway leading to Armenia.

The Karabakh leaders arrived in an Armenian border village through a 5-kilometer road that links up to the highway built by the Azerbaijani side. The temporary road will function until Armenia builds its section of the new corridor. Government officials in Yerevan have said that work on that section will be completed by next spring.

Armenia to Be Invited to Eu Summit on New Pan-European Security Body



YEREVAN — Armenia is among the invitees to an EU summit to discuss a new organization uniting the democracies of the European continent, The Guardian reported citing President of the European Council Charles Michel.

The informal summit will take place in Prague on 6 October to forge a European Political Community.

The new British PM will also be invited.

“While EU diplomats agree on Britain’s invitation to the gathering, the question of Turkey’s inclusion is more controversial. Greece and Cyprus, embroiled in long-running disputes with Ankara, oppose inviting Turkey, which remains an official candidate to join the EU although talks have been stalled for years. Michel said the EU should invite Turkey, but that he wanted to “make sure there is

support from all colleagues”, The Guardian reports.

“The rest of the guest-list is straightforward: there will be invites for Norway and Switzerland, non-EU countries deeply integrated into the single market, as well as nine countries hoping to join the EU, including Ukraine, Moldova, Georgia and six western Balkan states, plus non-candidates Armenia and Azerbaijan.”

“While there have been concerns the European Political Community could simply replicate existing pan-European bodies, such as the Organization for Security and Co-operation in Europe (OSCE), Michel suggested leaders wanted an informal and “very flexible” body, resembling the G7 or the G20.”

He said: “We don’t want a complicated structure.”

a range of multilateral and bilateral creditors. As of end-1H22, 48% of

general government debt was owed to official lenders.

Fitch Ups Its Real GDP Growth Projection for Armenia, Affirms Ratings at B+

NEW YORK — Fitch Ratings has significantly improved its outlook for Armenia’s economic growth in 2022.

According to the rating agency’s press release, the Ukraine conflict and sanctions on Russia have triggered a substantial migration of Russian, Ukrainian and Belarusian citizens to Armenia since March, with visitor numbers rising 515% yoy in 1H22.

This is further supported by a 200% yoy increase in money transfers from Russia to Armenia in 1H22. A large proportion of the migrants are believed to be highly educated professionals, particularly from the information and communications technology sector.

These trends helped boost growth 13% yoy in 2Q22 (1Q22: 8.7% yoy) and should provide momentum in 2H22. Fitch has upped its real GDP growth

projections for 2022 to 6.4% as remittances boost personal consumption, and export performance (particularly to Russia) holds up. Fitch expects growth will average 4.7% in 2023-24.

Fitch Ratings has affirmed Armenia’s Long-Term Foreign-Currency Issuer Default Rating (IDR) at ‘B+’ with a Stable Outlook.

Armenia’s ‘B+’ IDRs reflect strong per-capita income, governance and business environment indicators relative to peers, as well as a robust macroeconomic and fiscal policy framework and credible commitment to reform, underpinned by IMF support. Set against these strengths are a high share of foreign-currency denominated public debt, relatively weak external finances, and geopolitical risks.

Armenia benefits from strong support and technical assistance from

Knowledge and Education are Main Pillars Enabling Countries to Overcome Challenges— President Khachaturyan

YEREVAN -- In the era of modern changes knowledge and education are the main pillars, President Vahagn Khachaturyan said in a message on Knowledge and Schooling Day. The message reads:

I congratulate you all on September 1st – Knowledge and Schooling Day.

The beginning of each academic year is especially unique and binding for all of us. In the era of modern changes knowledge and education are the main pillars, thanks to which people, societies and states should be able to overcome various challenges and problems.

Dear first-graders and first-year students, I especially want to wish you a peaceful course in this new phase of your life, where you will learn, absorb knowledge and gain experience, enriching the intellectual potential of our society, which is a primary guarantee of not only the development of our country but also a prerequisite for the welfare of our society and citizens.

My special congratulations to all the teachers and professors. I wish you success in your difficult and responsible work. Not merely work or



professional duties are placed on your shoulders, but also the responsibility of forming conscious and dignified citizens by providing quality education to the generations.

Dear students and teachers, keep in mind that knowledge is your future, your way into a big life. It will arm you with an opportunity to find your place in the modern world, and become valued citizens of our country and true patriots.

Dear compatriots, once again, my congratulations on Knowledge and Schooling Day.

As Artsakh Commemorated 31st Independence Day

Continued from page 1

millions of dollars for humanitarian assistance initiatives, the letter highlighted that the “need for this assistance has only grown due to Azerbaijan’s indiscriminate bombing campaigns in 2020 and the ongoing provocations by their troops which further endanger food, water, energy, and other critical resources for these communities.”

“The Armenian Council of America (ACA) is grateful to Armenian Caucus Co-Chair Frank Pallone, Jr. (D-NY) and Congresswoman Dina Titus (D-NV) for their leadership and to all of the signatories for their urgent appeal to the Biden Administration to assess the dire situation in Artsakh and Armenia as a result of Azerbaijan’s military aggression and war on the indigenous Armenian population,” stated ACA Chair, Sevak Khatchadorian.

Joining Representatives Pallone and Titus in cosigning the Congressional letter on Artsakh assistance are Representatives: Nanette Barragan (D-CA), Earl Blumenauer (D-OR), Tony Cardenas (D-CA), Andre Carson (D-IN), Judy Chu (D-CA), David Cicilline (D-RI), Katherine Clark (D-MA), Lou Correa (D-CA), Jim Costa (D-CA), Jason Crow (D-CO), Lloyd Doggett (D-TX), Anna Eshoo (D-CA), Adriano Espaillat (D-NY), Josh Gottheimer (D-NJ), Jim Himes (D-CT), William Keating (D-MA), Ro Khanna (D-CA), Andy Kim (D-NJ), Raja Krishnamoorthi (D-IL), James Langevin (D-RI), John Larson (D-CT), Rick Larsen (D-WA), Brenda Lawrence (D-MI), Susie Lee

(D-NV), Mike Levin (D-CA), Ted Lieu (D-CA), Zoe Lofgren (D-CA), Alan Lowenthal (D-CA), Tom Malinowski (D-NJ), Carolyn Maloney (D-NY), James McGovern (D-MA), Grace Meng (D-NY), Joseph Morelle (D-NY), Grace Napolitano (D-CA), Donald Norcross (D-NJ), Chris Pappas (D-NH), Scott Peters (D-CA), Chellie Pingree (D-ME), Katie Porter (D-CA), John Sarbanes (D-MD), Janice Schakowsky (D-IL), Adam Schiff (D-CA), Brad Sherman (D-CA), Albio Sires (D-NJ), Jackie Speier (D-CA), David Trone (D-MD), and David Valadao (R-CA).

These sentiments were echoed in a letter, dated the same day, from Armenian Caucus leaders Reps. Frank Pallone, Jr. (D-NJ), Gus Bilirakis (R-FL), Jackie Speier (D-CA), David Valadao (R-CA), and Adam Schiff (D-CA) to Artsakh Republic President Arayik Harutyunyan. The letter, which congratulated Artsakh on its Independence Day, also recognized “the ongoing challenges and threats posed by Azerbaijan” and reassures President Harutyunyan that the Armenian Caucus is “pushing the United States government to take every available diplomatic action possible to penalize the Azerbaijani and Turkish regimes for their attacks on Artsakh in 2020 and their deadly actions that continue to this day.”

“Clear American leadership in the South Caucasus is needed now more than ever, and we join Congress’ call on the Biden Administration to play a pivotal role in helping the Armenian people secure a peaceful and prosperous future,” said Khatchadorian.

Artsakh Ombudsman's New Report Details Violations of the Rights of the People of Artsakh by Azerbaijan in August 2022

STEPANAKERT -- Artsakh Human Rights Ombudsman’s office has published an ad hoc trilingual report (Armenian, Russian, English) on the violations of the rights of the people of Artsakh by Azerbaijan in August 2022, which has been sent to the Co-chairs of the OSCE Minsk Group, organizations with a primary mandate of human rights protection and other human rights institutions.

The first section of the report presents details on the systematic and continuous crimes committed by Azerbaijan against the people of Artsakh after the November 9, 2020 Statement. After the establishment of the ceasefire, Azerbaijan committed more than 112 crimes that caused human casualties and significant material damage. As a result of those crimes 3 civilians and 15 military servicemen were killed, 126 persons were subjected to attempted murders (48 civilians, 78 militaries), and 65 people (14 civilians, 51 militaries) were wounded in various degrees. The section also made a reference to the Azerbaijani aggression launched against the people of Artsakh in August 2022 and its consequences.

The second section provides details on the existential importance of the Corridor connecting the Republic of Artsakh to the Republic of Armenia (Lachin Corridor) for the people of Artsakh, the inadmissibility of changing its legal regime, and Azerbaijan’s illegal demand of changing the route of the Corridor much earlier than was agreed under the November 9, 2020 Statement. It has been stated in the section that to advance its illegal demands, Azerbaijan continuously uses or threats to use force, grossly violating international law.

The third section introduces details on the depopulation of Berdzor, Aghavno, and Nerkin Sus communities of the Kashatagh region of Artsakh, resulting in gross violations of fundamental human rights, also referring to



the European Court of Human Rights’ interim measures issued on August 19, 2022, and expanded on November 3 of the same year, which call on the parties “to refrain from such actions that could lead to a violation of the rights of civilians protected by the Convention.”

The fourth section provides some proof of the drastic increase in hate speech and other manifestations of Armenophobia by the state officials and public figures of Azerbaijan, parallel to the August escalation. It has been stated that Azerbaijan is clearly violating the order of the International Court of Justice issued on December 7, 2021, particularly paragraph 2, according to which Azerbaijan must “refrain from engaging in or tolerating hate speech against Armenians... punishing all acts of racial discrimination, both public and private, against Armenians, including those taken by public officials.”

The fifth section makes a reference to the necessity of clarifying the mandate of the Russian peacekeeping mission, which will provide effective mechanisms for properly countering the ceasefire violations and for ensuring stable and lasting peace.

The report was prepared on the basis of studies conducted by the Human Rights Defender’s Office, on the visits to various communities, citizens’ houses, on private conversations with citizens, and information received from state-authorized bodies.

Armenian and Azerbaijani Leaders

Continued from page 1

pean Council President Charles Michel in Brussels. He stressed that Armenia’s goals remain unchanged.

“As I have stated in my public speeches, the Republic of Armenia has adopted the peace agenda, and we need resoluteness to call it to life. It’s

not easy, the possible solutions are not obvious, but we must continue to work consistently,” he said.

He stressed that it is a necessity and the people’s desire that lasting and comprehensive peace is established in the region as soon as possible, “and we must concentrate on solving this issue.”

Pashinyan, Putin Discuss Bilateral Ties

Continued from page 1

are developing in all directions. Putin also recalled Armenian-Russian cooperation within the framework of inter-governmental organizations, including the CSTO. He said also that Uzbekistan will host soon a series of event involving members of the Shanghai Cooperation Organization, where “we will have another opportunity to see each other again and talk with all our colleagues.”

“Russia is the closest partner and strategic ally of the Republic of Arme-

nia. And especially in these difficult times, constant communication and clarification of positions are very important,” the Armenian PM said in response.

He emphasized the importance of the Russian peacekeeping mission in Nagorno Karabakh. “This is not an easy mission. We have talked about it many times. We highly appreciate the activities of Russian peacekeepers in Nagorno-Karabakh, in the Lachin Corridor, and I think it is very important to highlight that.”

Armenian Educational Benevolent Union Presents 2022-2023 AEBU Scholarship Awards

Continued from page 1

a promising young artist who played Minuets 1 and 2 from Partita No. 3 by Bach.

Dr. Linda Guergerian-Meguerditchian enchanted the attendees with her warm recital of an Armenian poem, 'Dariners' (My Years) by Hamo Sahian.



Gregory Mazmanian, Sierra Madre, California – GPA 4.4

Attending the University of California, Los Angeles, Gregory Mazmanian will be majoring in Electric Engineering. Mr. Mazmanian has been serving through many activities at the St. Gregory Armenian Church Youth Organization in Pasadena, AGBU scouts, Pasadena High School Armenian club, and volunteering at the Sierra Madre Public Library Summer Reading Program.



Karina Messerlian, Fresno, California – GPA 4.3

Attending the California State University of Fresno, Karina Messerlian will be majoring in Liberal studies. Ms. Messerlian has been involved in 'Homenetmen' as a scout and athlete, the Holy Trinity Apostolic Armenian Church youth group, as well as a teacher's aide, camp counselor, and officer of the Armenian club throughout high school.



Edgar Sahakian, North Hills, CA, USA – GPA 4.5

Moving on to his 3rd year in Psychobiology at the University of California, Los Angeles, Edgar Sahakian has been a member, leader, and camp counselor at Gevorikian



Dance Academy. Mr. Sahakian has been serving on several committees in the Armenian Students' Association and the Pre-Health Society at UCLA.

Macyn Topoozian, Fresno, California – GPA 4.22

Attending Fresno State University, and majoring in Liberal Studies, Macyn Topoozian has been a member of the Armenian Church Youth Organization, serving in many capacities and organizing many events,

Yerevan, Armenia

Attending the American University of Armenia, Mr. Kouyoumjian is enrolled in the Master-in-Law program.

Gassia Norshahian, Bourj Hammoud, Lebanon

Attending Lebanese American University, Lebanon, and majoring in Nursing, Ms. Norshahian is a graduate of Sahagian Levon Meguerdichian College in Beirut,



most notably a recent fundraising for the soldiers of Armenia fighting in the Artsakh war. Ms. Topoozian organized a Farmers Market with the proceeds of which they distributed apparel to local children, as well as poor villages in Armenia where they helped build a home for a needy family.

Lebanon.

Karine Tankian, Beirut, Lebanon

Attending the American University of Beirut, Lebanon, and majoring in Nursing, Ms. Tankian is a graduate of Sahagian Levon Meguerdichian College in Beirut, Lebanon.



Armenia and Lebanon:

Scholarships will be presented to the selected recipients in Armenia and Lebanon, in the coming weeks, by AEBU local chapters in Yerevan and Beirut.

Arousiak Seropyan, Yerevan, Armenia

Attending Yerevan State University, Finance/Economy college, Ms. Seropyan will be studying Management.

Misak Kouyoumjian,

AEBU Southern California Chapter grants annual scholarships to qualifying undergraduate students of Armenian descent, enrolled at an accredited four-year university across the United States. This year, the scholarship was also available to Armenian students studying in Lebanon and Armenia.

The AEBU Scholarship Fund's mission is to invest in the future of our youth and in turn, the future of our Armenian nation. This is made possible with the support of our donors.



United States:

Maral Gurgnenian, Los Angeles, California – GPA 4.02

Attending the University of California, Santa Barbara, Maral Gurgnenian will be studying Pre-chemistry in pursuit of a career in medicine, specifically Pharmacy. Ms. Gurgnenian has been an active member of the Armenian and non-Armenian communities. She has been engaged in many activities at St. Peter Armenian Apostolic Church in Van Nuys, such as toy and food drives during the holidays and beach cleaning during the COVID-19 pandemic.

ԷՋԵՐ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ 1896 ԹՈՒԱԿԱՆԸ



Գնահատելու համար Հնչակեան գրական իրապաշտութեան արժէքը, աչքի առջեւ պէտք է ունենալ մինչեւ այդ՝ հրապարակը գրաւող ուսման թիկ գրականութեան սանձարձակ տիրապետութիւնը:

Ռոմանթիզմի իշխաններն էին Գրիգոր Օտեան, Մկրտիչ Պէշիկ-թաշլեան, Պետրոս Դուրեան, Նիկողայոս Ռուսինեան, ՆարայէՅ, Թ. Թերզեան, մանաւանդ Ղեւոնդ Ալիշան եւ թարգմանիչներու փաղանգը:

Անոնք թէեւ ընթացողի երեւակայութիւնը կը գրգռէին, անցելապաշտ հայրենասիրական բուռն պափոսով եւ կ'ոգեկոչէին կրօնական ու քաղաքական պայքարներու հերոսները՝ յանուն հայրենական գահի եւ Քրիստոնէութեան, սակայն անոնց աչքերը Պառնասէն վար չէին իջներ եւ հայ գեղջուկին ու արհեստաւորներուն ցաւն ու տանջանքը չէին իւրացներ: Բացի այդ՝ ուսման թիկները իրենց ներշնչումները կ'առնէին եւրոպական, մանաւանդ ֆրանսական վայելչասէր դասակարգէն, որ ոչ մէկ նմանութիւն ունէր գաւառացի հայու տառապակոծ կեանքին հետ:



Արփիար Արփիարեան

Կովկասեան Հայութիւնը եւ տաճկահայր՝ 1880ական թուականներուն՝ գրեթէ միշտ շփման մէջ էին իրար հետ: Հնչակեան թերթերը, քարոզչութիւնը եւ ասպատակային շարժումները հիմնովին փոփոխութեան ենթարկեցին յատկապէս Պոլսոյ գրական կեանքը:

Պոլսոյ «Արեւելք» օրաթերթը հիմնուեցաւ 1884ին, երկարելով իր կեանքը մինչ 1912: Կարապետ Իւթիւճեանի «Մասիս»ը կը դատապարտուէր միանալ «Արեւելք»ին եւ դառնալ «Արեւելք-Մասիս» Բիւզանդ-Քէչեանի քաղքենի խմբագրապետութեան տակ: «Արեւելք-Մասիս»ի գրական բաժնի խմբագրութիւնը սակայն կը յանձնուէր Արփիար Արփիարեանին, հետը ունենալով Լեւոն Բաշալեանը եւ Արշակ Չօպանեանը, որոնք արդէն որակեալ գրողներ էին:

Արփիարեան-Բաշալեանի գրական հանգանակը կ'ըլլայ՝ գրականութիւնը հեռացնել երազային խորհրդածութիւններէն, ուսման թիկը գրայնութիւններէն եւ մօտեցնել իրական կեանքի շարժումներուն:

Արփիարեան կը սկսի իր հռչակա-

կաւոր քրոնիկները (ժամանակագրութիւն) խիզախ եւ նորութիւններու հակամէտ թափով մը, միշտ դառնալով կեանքի իրական վերիվայրումներուն շուրջ: Իրապաշտ գրականութեան երկունքի օրերն էին: Գաւառի հայու տառապակոծ կեանքը եւ Պոլսոյ մէջ բոյն դրած յեղափոխական ոգին իմ քզինքը կը պարտադրէր:

Արփիարեանի գրութիւնները ընդվզում կ'առաջացնէին Պոլսոյ քաղքենի շրջանակներուն մէջ, երբ ան կը համադրէր գաւառի բռնութիւնները, կեղեքումները՝ քաղաքի ազատ կեանքին հետ:



Սմբատ Բիւրատ

Արփիարեանի «Կարմիր ժամուց»ը ո'չ միայն կ'արդարացնէր հայ ազատագրութեան գիմող Յուսիկ քահանան, այլ եւ կը յեղաշրջէր սուլթանապաշտ թաղական աղանները, որոնց աչքերը կը բացուէին տեսնելու անիրաւութիւնները իշխաններուն եւ գրկանքները՝ ստրուկ ուսուցիչ հայերուն:

«Հայրենիք» թերթը Հնչակեան մարտական ուժի խօսնակն էր, ուր կը համախմբուէին նորագիր Ձօհրապները, Օտեանները, Լ. Բաշալեանները եւ շատ ուրիշները:

Թրքական գրաքննութիւնը ա'լ աւելի կ'աշխուժանար եւ կրնկալուի կը հետապնդէր յատկապէս Արփիարը եւ Բաշալեանը:

Գրիգոր Ձօհրապ եւս կը մօտենար իրապաշտներուն՝ կենդանի գոյնով ներկայացնելու համար աշխատանքը, պատուախնդրութիւնը, միեւնոյն ատեն հարուածելով քաղքենի աշխատեալ կեանքը:

Հնչակեան իրապաշտութեան հրապարակ իջնելէն երեք տարի ետք յայտնուեցաւ ու կերպարանաւորուեցաւ Դաշնակցական գրականութիւնը յանձինս՝ Սիւսանյանի, Վարանդեանի եւ Ահարոնեանի:

Սմբատ Բիւրատ՝ երկար ատեն ուսուցչութիւն ըրած Հնչակեան գործիչ մտաւորականը կ'անցնի գրական ասպարէզ եւ նշանաւոր կը դառնայ իր գրքերով, որոնց մէջ՝ «Երկրորդ Սասունը» եւ «Բանտէ-Բանտ»ը ժողովրդական լայն շրջանակին մէջ կը տարածեր Հնչակեան ուղղակի գործունէութիւնը:

Լ. Բաշալեան կունակ դարձնելով փարիզեան գրականութեան՝ իր տիպարները կը վերցնէր հայ աշխատաւոր գանգուածէն: Անոր



Ղազարոս Աղայեան

«Սիւզէնի Վարպետը» (1890) գաւառէն Պոլիս անցած թշուառ ընտանիքի մը պատմութիւնն է:

Լ. Բաշալեան իրապաշտութիւնը կը նախընտրէր մահացած վիպասանութեան, որ յումայէտս կը վատնէր գրողին միտքը:

1892-ին «Հայրենիք»ի մէջ լոյս տեսած «Ձրի» գրուածքով Բաշալեան կը ներկայացնէր աղքատ դպրոցականի մը պատմութիւնը, որ «ձրիվարժէ»ի նախատական յորջորջումէն ձերբազատուելու համար, կը հրաժարի ուսումէն եւ կը դիմէ ճակտի քրտինքին, պատուաւոր աշխատանք մը ձեռք բերելով:

Լ. Բաշալեան շարքային Հնչակեան էր եւ բուռն եռանդով կը վարէր կազմակերպչական գործերը՝ մինչեւ 1896: Երկարատեւ հետապնդումներէն ազատելու համար կը փախչէր Պոլսէն եւ կ'ապաստանէր Լոնտոն, մասնակցելով «Մարտ» թերթին, իր իրապաշտ գրականութեամբ:

Այս շրջանին բեղուն գրչի տէր էր նման Լեւոն Մկրտիչեան, որ կ'աշխատակցի «Մարտ» եւ այլ թերթերու:

Հնչակեան այս հնոցի մէջ թրծուեցաւ նաեւ Տիգրան Կամսարական, որ տուաւ իրապաշտ գրուածքներ «Հայրենիք»ի մէջ: Օրինակ, անոր «Յարօ» մշտեցի պանդուխտի տիպար մըն էր, որ իր հաստ բազուկը եւ թիկնեղ իրանը նետած հրէայի ջրհան մեքենային վրայ, կը դարձնէր անոր անիւները: Ան ձգած էր «Երկիրը», որուն վրայ սեւ կը ցաթէր արեւը, ուր նամուսն անարգուած, կեանքը վտանգի մէջ, թալանը անկուշտօրէն կը մաշէր գիրքէն: Հոն կը տեսնուի ժահողէմ հարկահաւաքը, բիրտ դահիճը, որ կը խլէ Յարօյնց ողորմելի հիւղակին յետին կահոյքը, տուրքի մը փոխարէն, գոր չէին կրցած վճարել «գի թուրքն անցեր էր իրենց հողերէն»:

Շիրվանզադէն հասակ նետած էր Պագուի հայ բանուորական կեանքի մէջ դեռ 1880 թուականին սկսեալ: 1889ին երբ Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կը պաշտօնավարէր, սերտ յարաբերութիւն կը մշակէր խնամազատի եւ Ռուբէն Բերբերեանի հետ եւ կը մկրտուէր Հնչակեան: Ի բնի գործօն երիտասարդ ըլլալուն՝ ան կը ստանձ-

նէ կազմակերպչական-փրոփական-տի գործը եւ կը շրջի Ռուսաստանի հայաշատ քաղաքները՝ հիմնելով Հնչակեան մասնաճիւղերը:

Ռուբէն Տէրտէրեանի քարոզչութեան ազդեցութեան տակ՝ դասակարգային հակամարտ պայքարը կը ներմուծուի գրականութեան եւ թատերգութեան մէջ:

Այդ ազդեցութեամբ՝ Շիրվանզադէի գրուածներէն մէկը՝ «Արսէն Դիմաքսեան» գիրքն է: Երիտասարդը արհամարհելով հօր հարստութիւնը, կը նուիրուի բանուորին տառապանքը թեթեւցնելու աշխատանքին: «Քառու»ը գրուած է երբ Շիրվանզադէն՝ Հնչակեան հրետանին հետ բանտարկուած էր Մետեխի բերդին մէջ: Նոյն շունչով գրուած է նաեւ «Շրջանից Արտաքսուածը», ուր Պետրոս Մարդանեան իր ուսանողական տարիներէն սկսեալ կը հալածուի իբր յեղափոխական, վերջապէս կը նուիրուի հասարակական շահերու պաշտպանութեան գործին:



Շիրվանզադէ

Ղազարոս Աղայեան անձնապէս գործօն դեր կը կատարէ Հնչակեան կուսակցութեան մէջ, որուն պատճառաւ կը հալածուի:

Հնչակեան խոշոր հրետանիներէն՝ Ատրպետ, չի բաւականանար միայն վէպեր արտադրելով, այլ Պարսկաստանի եւ Կովկասի մէջ՝ թեւերը սոթտած կը մանկ ժողովրդական շարքերը, կը գինէ եւ Երկիր կը դրկէ ասպատակային խմբեր, մասնակցելի տալու համար սուլթանի գմի դէմ մղուող պայքարին:

Աւետիք Իսահակեան կը յօժարի դառնալ Հնչակեան Կեդրոնի անդամ, աւելի մօտէն ծառայելու ժողովուրդին, բայց գրիչը աւելի հզօր կը կշռէ իր մօտ՝ քան բրիչը ու ան կը մնայ ժողովրդական երգիչ եւ ոչ քաղաքական գործիչ: Պէտք չէ մոռնալ իր երիտասարդական աւելը եւ խանդը՝ որոնցմով ներշնչած է այդ օրերու հայ երիտասարդութիւնը, հակառակ Մետեխի բանտի խոնաւ մթնոլորտին եւ շարժարալից կեանքին:

Հայ անդրանիկ եւ հզօր յեղափոխութեան Մայր Կուսակցութիւնը իր պանթէոնին մէջ կը գետեղէ՝ իր գրչի արժանաւորները, որոնք իբր երեխայիք քիչ թէ շատ, աւել տուած են յեղափոխական մեծ գործին, անոր սկզբնական շրջանին:

Հայկազեան Համալսարան
Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն
Գիտաժողով
Արարական Ծոցի Երկիրներու Հայերը

Հայկազեան համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնը Երկուշաբթի, 12 եւ Երեքշաբթի 13 Դեկտեմբեր 2022ին պիտի կայացնէ Միջին Արեւելքի հայօճախներուն նուիրուած իր եօթերորդ եւ վերջին գիտաժողովը: Գիտաժողովը պիտի կայանայ անձամբ ներկայութեամբ եւ/կամ հեռահարգակցութեամբ:



Արդ, կը հրաւիրենք Սփիւռքի եւ հայրենի բանասէրները, օտար հայագէտները՝ որոնք հետաքրքրուած են կամ կ'առնչուին վերոյիշեալ հայօճախներու կենսագործունէութեան ուսումնասիրութեան, դիմելու Կեդրոնի՝ հիմնուելով ստորեւ նշուած տուեալներուն վրայ:

Ա.- Մասնակիցները կրնան ուսումնասիրութիւն ներկայացնել հետեւեալ նիւթերէն որեւէ մէկուն շուրջ.-

- 1) Պատմութիւն.- Հայերը վերոյիշեալ երկիրներէն որեւէ մէկուն մէջ՝ 1940ականներէն մինչեւ մեր օրերը:
- 2) Բնակավայրեր.- Հայկական բնակավայրերը, ժողովրդագրութիւնը, արհեստները, հայութեան բնութագրումը տուեալ երկիրներուն մէջ, ներքին կազմակերպումը, կապը եւ առնչութիւնները Սփիւռքի մօտիկ թէ հեռուոր հայօճախներուն եւն.:
- 3) Հայ Եկեղեցին (Առաքելական, Կաթողիկէ, Աւետարանական).- Թեմական կեանք, Հայ Եկեղեցին եւ իր դերը միջկրօնական երկխօսութեանց, թէ մարդասիրական աջակցութեան ծիրին մէջ:
- 4) Ազգային կեանք.- Հայ կազմակերպութիւններն ու միութիւնները (ընկերային, բարեսիրական, մշակութային, կրթական, մարզական եւն.), անոնց կենսագործունէութիւնը, հոլովոյթը, միջմիութեանական եւ միջշրջանային չարաբերութիւնները:
- 5) Մշակոյթ.- Հայ դպրոցները, հայերէնագիտութիւնը, ճանասփիւռքի կայանները, հեռատեսիլի հաղորդումները, երգչախումբերը, թատրոնը, գեղանկարչութիւնը, հայօճախին մշակութային առանձնատկութիւնները:
- 6) Համարկուծ.- Հայութեան նպաստը վերոյիշեալ երկիրներու մշակոյթին, տնտեսութեան եւ ճարտարարուեստին, առեւտուրին, արհեստներուն եւ շուկային, հաղորդամիջոցներուն եւ ընկերային ու մարդասիրական բնագաւառներուն:
- 7) Հայերը տեղաբնիկներուն պատկերացումին մէջ.- Հայերուն պատկերը տեղաբնիկներուն մշակոյթին թէ հանրային հաղորդակցամիջոցներուն մէջ:
- 8) Սփիւռքահայութեան հետ մշակութային կապերու կոմիտէ/Սփիւռքի նախարարութիւն/Սփիւռքի յանձնակատարի գրասենեակ-հայօճախներ փոխյարաբերութիւն:
- 9) Միջպետական չարաբերութիւններ.- Հայաստանի Հանրապետութիւն- արաբական ծոցի երկիրներ պետական չարաբերութիւնները, անոնց ընթացքը, զարգացումը, փոխգործակցութիւնը:
- 10) Հայաստանցի քաղաքացիները արաբական ծոցի երկիրներուն մէջ.-

Անոնց կենսագործունէութիւնը, դիմապատկերը, ընդհանուր արժեւորումը:

11) Ինքնութեան հարցեր.- Նոր սերունդներու հայերէնախօսութիւնը, մշակութային պաշարը, ինքնութեանական հարցերը:

Բ.- Մասնակցութեան տուեալներ

- 1) Դիմորդները պարտին մինչեւ 30 Սեպտեմբեր 2022 Կեդրոնին յղել իրենց ուսումնասիրութեան նիւթին վերնագիրը եւ նախատեսած բովանդակութիւնը:
- 2) Դիմումները եւ նիւթերը քննարկուելէ եւ ընտրուելէ ետք պատասխանը կը տրուի մինչեւ 7 Հոկտեմբեր 2022:
- 3) Մասնակիցներ պարտին 20 վայրկեան տեւողութեամբ զեկոյցներ ներկայացնել իրենց ուսումնասիրութեան մասին՝ արաբերէն, հայերէն կամ անգլերէն:
- 4) Մասնակիցները յանձնառու են իրենց ուսումնասիրութիւնները հրատարակութեան տրամադրելու՝ գիտաժողովի զեկուցագիրքին: Հետեւաբար, անոնք պարտին վերջնական ձեւի բերած ըլլալ իրենց ուսումնասիրութիւնները եւ յանձնել զանոնք Կեդրոնին մինչեւ 28 Փետրուար 2023:

Գ. Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը մասնակիցներուն պիտի տրամադրէ եռօրեայ կեցութիւն:

Յաւելեալ տեղեկութիւններու եւ մանրամասնութիւններու համար դիմել Հայկազեան Համալսարան, Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն.- հեռ. 00961 1 349230 ext. 205, կամ 00961 3 712058, կամ գրել՝ adakessian@haigazian.edu.lb հասցէին:

Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

Ոգեշնչող Ժամանակներ Աստղագիտութեան Համար. «Astronomy» Պարբերականի Գլխաւոր Խմբագիրը Դասախօսութիւն Տուալ Երեւանի Մէջ



«Starmus VI» միջազգային փառատօնը Հայաստան բերած է աստղագիտութեան վերջին նուաճումները. «Astronomy» պարբերականի գլխաւոր խմբագիր Տէյվիա Այքըրը արհեստագիտական կրթութեան առաջատար ԹՈՒՄՕ Երեւան կեդրոնին մէջ դասախօսութեամբ բացաւ աստղալուսանկարչութեան գաղտնիքները:

ԹՈՒՄՕ կեդրոնի սաները եւ աստղալուսանկարչութեամբ հետաքրքրուող անձեր հնարաւորութիւն ունեցան հանդիպելու, լսելու դասախօսութիւնը եւ մասնագէտին ուղղելու գիրքէն հետաքրքրող հարցումները:

Տէյվիա Այքըրը նշեց, որ թէպէտ մարդկութիւնը տակաւին շատ ընելիքներ ունի աստղագիտութեան ոլորտին մէջ՝ բացառապէս իր տարբեր Միւր կաթիններու անյայտ կողմերը, սակայն միեւնոյն ժամանակ վերջին տարիներու գիտական նուաճումները զգալի յառաջընթաց արձանագրած են այս հարցին մէջ: «Սա ամենաոգեշնչող ժամանակահատուածն է՝ ուշադրութիւն դարձնելու եւ փորձելու հասկանալ, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ աստղագիտութեան ոլորտին մէջ», նշեց ան:

Այքըրը դասախօսութեան ընթացքին խօսեցաւ նաեւ սեւ խոռոչներու տեսակներու, անոնց յառաջացման պատմութիւններուն մասին՝ անդրադառնալով նաեւ գիտական հանրութեան կողմէ սեւ խոռոչներու ուսումնասիրման տարբերակներու մշակման: Ընդ որում, ան նկատեց, որ սեւ խոռոչներու ուսումնասիրման ոլորտին մէջ աշխոյժ գործունէութիւն կը ծաւալեն տարբեր երկիրներ, մասնաւորապէս Ճափոնը:

ԹՈՒՄՕ-ի սաներու խնդրանքով ան խօսեցաւ նաեւ «մութ նիւթ»ի (dark matter) մասին՝ նշելով, որ տիեզերքին մէջ «մութ նիւթ»ի առկայութիւնը վերջնականապէս հաստատուեցաւ 1970-ական թուականներուն: Այքըրը նշեց, որ «մութ նիւթ»ը տիեզերքի զանգուածային ուժանիւթի 23 տոկոսը կը կազմէ, սակայն մինչեւ հիմա մարդկութիւնը չունի յստակ պատկերացում, թէ ի՞նչ է այն: «Մենք գիտենք կամ կը փորձենք ճանչնալ միայն մօտ 5 տոկոսը այն ամէնուն, ինչ կը կազմէ Տիեզերքը: Տակաւին

շատ ընելիքներ ունինք», ըսաւ ան: Տէյվիա ձոն Այքըրը ամերիկացի խմբագիր, գրող, ինչպէս նաեւ աստղագիտութեան եւ տիեզերքի հանրահռչակող է: Տէյվիա ձոն Այքըրը «Astronomy» ամսագրի գլխաւոր խմբագիրն է սկսած 2002 թուականէն: Ան գիտութեան եւ ամերիկեան պատմութեան 21 գիրքերու հեղինակ, համահեղինակ կամ խմբագիր է, եւ յայտնի է աստղագիտական դիտումներու վերաբերեալ ամսագրի՝ «Deep Sky Monthly»-ի հիմնադրմամբ, երբ տակաւին երկրորդական դասարանի 15-ամեայ աշակերտ էր:

Այքըրը նաեւ պատմաբան է, որ ընդարձակօրէն ուսումնասիրած եւ գրած է ամերիկեան քաղաքացիական պատերազմին մասին:

Այքըրը իր ասպարէզը սկսած է 1982 թուականի Սեպտեմբերին «AstroMedia Corp.» ամսագրի հրատարակչութեան մէջ՝ որպէս «Astronomy»-ի խմբագրի օգնական եւ «Deep Sky»-ի խմբագիր: 1985 թուականին Kalmbach Publishing Co.-ը՝ Milwaukee Model Railroader, Trains եւ այլ վեր գրքերու հրատարակիչ, գնեց AstroMedia Corp.-ը: Այքըրի դերը ամսագրին մէջ խորացաւ, քանի որ ան կ'աշխատէր բազմաթիւ գիտական պատմութիւններու վրայ, ինչպէս նաեւ կը զննէր յօդուածներ, իսկ տասնամակի վերջաւորութեան, ընկերութիւնը տեղափոխուեցաւ Վաուքեշա, Ուիսքոնսին, Միլուոքիէն 16 միլիոն դոլար արեւմուտք, եւ այդ ժամանակ Այքըրը ստացաւ միացեալ խմբագրի իր կոչումը: Ան նաեւ հրատարակեց իր առաջին գիրքերը՝ «The Universe from Your Backyard»-ն («Տիեզերքը քո բակէն»), «Աստղագիտութիւն» (ամսագրին մէջ տպագրուած երկինքի խոր դիտման պատմութիւններու ժողովածու) եւ «Deep-Sky Observing with Small First Telescopes» («Խոր երկինքի դիտարկումը փոքր առաջին աստղագիտականերով»)՝ քլասիքըներու, միգամածութիւններու եւ Միւր կաթիններու մասին ծաղկաբանութիւնը: 1992 թուականին ընկերութիւնը որոշեց դադարեցնել «Deep Sky»-ի հրատարակութիւնը: 2002 թուականին Այքըրը դարձաւ «Astronomy» ամսագրի վեցերորդ գլխաւոր խմբագիրը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

www.massispost.com
daily news updates

Կոթյե Քափիլսոնի Յետ Համերգով Մեկնարկած Է Հայաստանի Պետական Սիմֆոնիկ Նուագախումբի 17-րդ Համերգաշրջանը Եւ «Արմենիա» Փառատօնը



«Արմենիա» միջազգային երաժշտական փառատօնի 3 Սեպտեմբերին կայացած բացմամբ մեկնարկած է Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի 17-րդ համերգաշրջանը: Երեկոյի ընթացքին Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբին հետ ելույթ ունեցած է համաշխարհային հռչակ վայելող թաւջութակահար Կոթյե Քափիլսոնը: Համերգային ծրագրին ընթացքին հնչած են Նիքոլայ Ռիմանյովի «Սպանական Քափիլիզիոն», Ալեքսեյ Շոբրի «Երաժշտական ուխտագնացութիւն» թաւջութակի համանուագը, Ալեքսանտր Պորոտինի նախերգանքը «Իշխան Իկոր» օփերային եւ Քամիլ Սեն-Սանսի Թաւջութակի թիւ 1 համանուագը: Համերգը ղեկավարած է Սերկէյ Սմբատեանը:

«Արմենիա» միջազգային երաժշտական փառատօնը հիմնադրուած է Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի գեղարուեստական ղեկավար եւ գլխավոր խմբավար Սերկէյ Սմբատեանի եւ Մշակոյթի աշակցման եւրոպական հիմնադրամի (EUFSC) նախագահ Քոնստանդին Իշխանովի նախաձեռնութեամբ եւ այս տարիներու ընթացքին Երեւանին մէջ հիւրընկալած է աշխարհահռչակ բազմաթիւ երաժիշտներ՝ անմոռանալի պահեր պարգեւելով երաժշտասէրներուն: «Արմենիա» 6-րդ միջազգային երաժշտական փառատօնը տեղի կ'ունենայ ՀՀ Տնտեսութեան նախարարութեան աշակցութեամբ:

Կը նշուի, որ Սերկէյ Սմբատեանը, անդրադառնալով «Արմենիա» 6-րդ միջազգային երաժշտական փառատօնին, կարեւորեց, որ փառատօնին եւ նոր համերգաշրջանին բացումը կը տրուի Կոթյե Քափիլսոնի մասնակցութեամբ համերգով. «Ունինք փայլուն արուեստագէտներ, որ յառաջիկայ մէկ ամսուան ընթացքին ելույթ պիտի ունենան Երեւանի մէջ՝ Միշա Մայքի, Կիլ Շահամ, Եոզէֆ Քալեյա եւ այլք: Փառատօնային մշակոյթը կարեւոր է մեր քաղաքին համար: Ի սկզբանէ որոշած էինք, որ «Արմենիա» փառատօնը պէտք է տեղի ունենայ Սեպտեմբերին, երբ մեր մայրաքաղաքին մէջ շատ են զբօսաշրջիկները, որոնք, Հայաստան գալով, պէտք է հիանան նաեւ մեր արուեստով, մեր երաժիշտներուն վարպետութեամբ ու մեծ ճանաչում ունեցող երաժիշտ-

ներու կատարումները վայելելով: Կը կարծեմ, որ Կոթյե Քափիլսոնի նման արուեստագէտներու ներգրուումը փառատօնի շրջանակներուն մէջ դասական երաժշտութեան շատ երկրպագուներ կրնայ բերել մեր երկիր»:

«21-րդ դարի լաւագոյն թաւջութակահարներէն Կոթյե Քափիլսոն ըսաւ, որ շատ ուրախ է Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբին հետ հրաշալի համագործակցութեան համար: Երեւանի մէջ համատեղ հանդէս կուզան երկրորդ անգամ ըլլալով, առաջինը 2013 թուականին էր: Ան նշեց, որ մեծագոյն հաճոյք է բանալ «Արմենիա» փառատօնը: Իսկ 3 Սեպտեմբերի համերգը իրեն համար նշանաւոր է նաեւ անով, որ այդ օր իր ծննդեան օրն է: Թաւջութակահարը կը նկատէ, որ ուրախ է հանդէս գալու Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբին հետ, ուր կը նուագեն երիտասարդ, ներուժով լի երաժիշտներ: Քափիլսոնը նաեւ նշեց, որ ինք միշտ սիրով կը կատարէ այն ստեղծագործութիւնները, որ կը ներկայացնէ Երեւանի մէջ՝ Սեն-Սանսի եւ Շոբրի Թաւջութակի համանուագները:

Անդրադառնալով Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի նոր 2022-2023 թուականներու համերգաշրջանին՝ տեղեկացնեք, որ այս ընթացքին երաժշտասէրներուն կը սպասեն համերգային հանդիպումներ համաշխարհային ճանաչում վայելող երաժիշտներու հետ:

Նուագախումբը դասական երաժշտութեան սիրահարներուն պիտի ներկայանայ փառատօներով, համերգային երեկոներով, նոր նախագիծերով: Նախատեսուած են նաեւ արտասահմանեան հիւրախաղեր Բրիտանիոյ, Աւստրիոյ, Օմանի մէջ, որոնց շրջանակներուն մէջ, ի թիւս դասական երաժշտութեան համաշխարհային գանձարանի նմուշներու, պիտի ներկայացուին նաեւ հայ երաժշտահասներու ստեղծագործութիւններ», կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբէն յայտնած են նաեւ, որ նոր համերգաշրջանին կը նախատեսուի ձայնագրել հայ երաժշտահասներ Ալեքսանտր Յարութիւնեանի, ձոն Տէր Թադեւոսեանի, Տիգրան Ման սուրեանի ստեղծագործութիւններէն:

Դէպի Գիտութիւն՝ Նաեւ Արուեստի Միջոցով. Նուպէլեան Մրցանակակիր Քիփ Թորնը Դասախօսութիւն Տուաւ Երեւանի Պետական Համալսարանին Մէջ



Ամերիկացի աշխարհահռչակ բնագէտ, Նոպէլեան մրցանակակիր Քիփ Թորնը, որ Հայաստանի մէջ է «STARMUS VI» գիտութեան, արուեստի ու երաժշտութեան միջազգային փառատօնի շրջանակներուն մէջ, դասախօսութիւն տուաւ Երեւանի պետական համալսարանին մէջ, ներկայացուց նախ իր փորձը, թէ ինչպէս բնագիտութիւնը դարձած է իր սէրը, ինչպէս կարելի է մարդիկ գրաւել դէպի գիտութիւն, ապա նաեւ խօսեցաւ աւելի «մասնագիտական լեզուով»:

Աշխարհահռչակ բնագէտը փոքր տարիքին այլ հետաքրքրութիւն ունեցած է, ապրելով Ամերիկայի հիւսիսը, փափաքած է սառուց ջարդող ինքնաշարժի վարորդ դառնալ: «Ես 8 տարեկան էի, երբ մայրս գիտ տարաւ արեգակ նային համակարգի մասին դասախօսութեան, եւ ես տարուեցայ անով: 5 տարի անց, երբ 13 տարեկան էի, կարդացի ռուս բնագէտ ձորճ Կամովի «Մէկ, երկու, երեք... անսահմանութիւն» գիրքը, որ բնագիտութեան մասին էր, բնագիտութեան, որ դարձաւ իմ նոր սէրը», նշեց Թորնը:

Բնագէտին խօսքով՝ իր ասպարէզին ընթացքին ինք մշտապէս փորձած է նաեւ ոգեշնչել միւսները այնպէս՝ ինչպէս Կամովը ոգեշնչած է իրեն: Ինք նաեւ ջանացած է

արուեստի միջոցով մարդիկ գրաւել դէպի գիտութիւն: Ան Interstellar գիտաֆանթասթիկ ֆիլմի արտադրողներէն ու սենարի հեղինակներէն մէկն է:

«Այդ ֆիլմը աշխարհի մէջ շատ մարդոց ոգեշնչեց՝ հետաքրքրուելու գիտութեամբ», նկատեց Նոպէլեան մրցանակակիրը:

Ան նաեւ աշխատանքներ կը տանի երկրորդ ֆիլմի ուղղութեամբ, յոյս յայտնեց, որ յառաջիկայ 5 տարուան մէջ արդէն պատրաստ պիտի ըլլայ:

Ապա Թորնը տիեզերքի վերաբերեալ դասախօսութիւն կարդաց ամերիկացի նկարիչ, լուսանկարիչ Լիա Հալորնի հետ միասին: Նոպէլեան մրցանակակիրը խօսեցաւ սեփականերէն, պատասխանեց ներկաները յուզող տարբերոյթ հարցումներու՝ ձգողականութեան, սեփականներու, Interstellar-ու եւ այլնի մասին: Ֆիլմի վերջին մասին հարցումին ի պատասխան՝ անուանի բնագէտը խորհուրդ տուաւ կարդալ իր «Ինթերսթելարի Գիտութիւնը» գիրքը, որ կը բացատրէ ֆիլմը:

Թորնը Նոպէլեան մրցանակի արժանացած է 2017 թուականին Ռայնըր Վայսի եւ Պարիի Պարիշի հետ՝ ձգողականութեան ալիքներու դիտարկման գործին մէջ իրենց ունեցած վճռական ներդրման համար:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: -----
 Email: -----

«Մանչեսթր Եունայթդ» - «Արսենալ»՝ 3-1



Անգլիոյ առաջնութեան 6-րդ հանգրուանին «Մանչեսթր Եունայթդ» ընդունեց առաջատար «Արսենալին» եւ պարտութեան մատնեց 3:1 արդիւնքով:

Նորամուտը մանչեսթրերէն խումբին կոլով նշեց Ամսթերտամի «Այաքսի» տեղափոխուած պրագիլցի յարձակող Անթոնին, որ անգլիացի յարձակող Մարքուս Ռեշֆորտի փոխանցումէն յետոյ բացաւ հաշիւը 35-րդ վայրկեանին:

«Արսենալ» 5 յաջորդական յաղթանակէն յետոյ առաջին պարտութիւնը կրեց այս մրցաշրջանին եւ 15 կէտով առաջինն է: 1-ական կէտ ետ են յաջորդ երկու տեղերը գտնուող «Մանչեսթր Սիթին» եւ «Թոթենհեմը»: «Մանչեսթր Եունայթդ» բարձրացաւ 5-րդ տեղ՝ 12 կէտով:

«Լիվերփուլի» Վատագոյն Սկիզբը Փրենիեր Լիկայի Մէջ

Անգլիոյ փոխախոյեան «Լիվերփուլը» վատագոյն ցուցանիշը արձանագրեց Փրենիեր Լիկայի առաջին 6 հանգրուաններուն՝ զերմանացի գլխավոր մարզիչ Եուրգեն Կլոպի օրօք:

6-րդ հանգրուանին «Լիվերփուլը» 0:0 արդիւնքով աւարտեց հանդիպումը «Էվերթոնի» հետ եւ ունի 9 կէտ:

2015-2016 թուականներու մրցաշրջանին «Լիվերփուլը» Փրենիեր «Մանչեսթր Սիթին» հաւասար՝ 1:1 արդիւնքով աւարտեց «Ասթոն Վիլայի» հետ հանդիպումը:

«Մանչեսթր Սիթին» 14 կէտով հաւասարեցաւ «Թոթենհեմին» եւ երկրորդն է:

«Ռեալը» Պարտութեան Մատնեց «Պետիսին» Եւ Առաջինն է

Սպանիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին փոխան «Ռեալը» Մատրիտի մէջ ընդունեց «Պետիսին»: Իտալացի Գաբրիէլ Անչելոտիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով:

Արքայական ակումբէն աչքի ինկան պրագիլցի յարձակողներ Ժուսէրո Վինիսիուսն ու Ռոտրիկոն:

«Ռեալը» չորրորդ յաղթանակը արձանագրեց եւ 12 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը: «Պետիս» առաջին պարտութիւնը կրեց եւ երկրորդն է՝ 9 կէտ:

Չալի. Տեսանք Յրաշալի «Պարսելոնա», Լեւանտովսկի Յրաշալի Խաղցող է

Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնայի» սպանացի գլխավոր մարզիչ Չալի մեկնաբանած է «Սելիլիայի» նկատմամբ 3:0 արդիւնքով յաղթանակը երկրի առաջնութեան չորրորդ հանգրուանին:



«Դրական տպաւորութիւններ ունիմ, բայց մեզ որոշակի հանգիստ պէտք է: Առաջին 15 վայրկեանն անյաջող անցուցինք, բայց յետոյ մենք տեսանք հրաշալի «Պարսելոնան»: 20-րդ վայրկեանէն կը գերելիշինք, կը խաղայինք մրցակցի կիսադաշտին մէջ, ցուցադրելով լաւ խմբային խաղ: Շատ լաւ կազմ ունինք, պէտք է առաւելագոյնը քաղել:

Լեւանտովսկին հրաշալի խաղցող է, ան շատ կ'օգնէ խումբին, ունի առաջատարի որակներ: Ան կ'օգնէ բոլորին, համեստ է, բայց յաղթող է», - Չալիի խօսքը կը մէջբերէ AS-ը:

«Պարսելոնան» 10 կէտով երկրորդն է, առաջատար «Ռեալ» ունի 12 կէտ:

Սերենա Ուիլյամսը Չէ Բացառած, Որ Կը Վերադառնայ Դաշտ

Դենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան երրորդ շրջանին պարտութիւն կրած ամերիկացի Սերենա Ուիլյամսը չէ բացառած, որ կը վերադառնայ դաշտ: «Մեծ սաղաւարտի» մրցաշարերու 23-ակի փոխանը յայտարարած էր այս առաջնութենէն յետոյ իր արհեստավարժ ասպարէզը աւարտելու մասին, քանի որ կը ցանկայ երկրորդ երեխան ունենալ:



«Չեմ կարծեր, որ կը վերանայիմ արհեստավարժ դենիսէն հեռանալու որոշումը, բայց երբեք չես կարող մինչեւ վերջ վստահ ըլլալ, որ ոչինչ չի փոխուիր»: Պարտութենէն յետոյ ըսած է 40-ամեայ մարզուհին, կը փոխանցէ US Open-ի մամուլի ծառայութիւնը:

Համաշխարհային դասակարգման աղիւսակին մէջ 605-րդ տեղը գրաւող աշխարհի նախկին առաջին ռակետը երրորդ շրջանին պարտուած էր 29-ամեայ աւստրալացի Ալլա Տոմլեանովիչին (46-րդ ռակետ):

Տիգրան Բարսեղեանի Կոլը Յաղթանակ Բերաւ «Սլովակիին»



Սլովակիայի առաջնութեան 9-րդ հանգրուանին փոխան «Սլովանը» հիւրընկալեց «Պանակա Պիտրիցային» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Պրատիսլավայի խումբին յաղթանակ ապահովեց Հայաստանի հաւաքականի յարձակող Տիգրան Բարսեղեանի կոլը 65-րդ վայրկեանին: «Սլովանը» 22 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը:

Ադամեանի Կոլը Նպաստեց «Քյոլնի» Յաղթանակին

Գերմանիոյ առաջնութեան 5-րդ հանգրուանին «Քյոլնը» հիւրընկալեց «Վոլֆսպուլերկին» եւ յաղթանակ ձեռք ձգեց 4:2 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի եւ «Քյոլնի» յարձակող Սարգիս Ադամեանը փոխարինման դուրս եկաւ 65-րդ վայրկեանին եւ կոլի հեղինակ դարձաւ 81-րդ վայրկեանին՝ արդիւնքը դարձնելով 4:2:

«Քյոլնը» 9 կէտով 5-րդ տեղը կը գրաւէ:

Միխայիլեանի Մասնակցութեամբ «Ինթեր» Պարտուեցաւ «Միլանին»

Իտալիոյ առաջնութեան 5-րդ հանգրուանին փոխան «Միլան» ընդունեց փոխախոյեան «Ինթերին»: 3:2 արդիւնքով առաւելութեան հասաւ իտալացի Ստեֆանօ Պիոլիի գլխավորած խումբը:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Միխայիլեանը «Ինթերի» պահեստայիններու կազմին մէջն էր եւ 63-րդ վայրկեանին փոխարինեց իտալացի կիսապաշտպան Նիկոլօ Պարելային:

«Միլան» 11 կէտով գլխավորեց մրցաշարային աղիւսակը, «Ինթեր» 5-րդն է՝ 9 կէտ:

ՈւեֆԱ-ն Տուգանած է ՊՍՇ-ին, «Ռոմային», «Ինթերին», «Միլանին», «Եուվենթուսին»

Ֆինանսական արդար խաղի կանոնները խախտելու համար ՈւեֆԱ-ն տուգանած է 8 ակումբներու:

Ֆրանսայի փոխան ՊՍՇ-ն տուգանուած է 10 միլիոն եւրոյով, իտալական «Ռոման»՝ 5 միլիոն եւրոյով, Իտալիոյ փոխախոյեան «Ինթերը»՝ 4 միլիոն եւրոյով, «Եուվենթուսը»՝ 3,5 միլիոն եւրոյով, Իտալիոյ փոխան «Միլանը»՝ 2 միլիոն եւրոյով, թրքական «Պեշկիվաշը»՝ 600 հազար եւրոյով, ֆրանսական «Մարսելը» ու «Մոնպէրնը»՝ 300 հազարական եւրոյով:

Պահանջները չկատարելու պարագային՝ ՊՍՇ-ի տուգանքը կը հասնի 65 միլիոն եւրոյի, «Եուվենթուսինը»՝ 23 միլիոն եւրոյի:



ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱՉԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

ՓԱՌԱՏՕՆ

SUNDAY, SEPTEMBER 18, 2022

STARTING AT 11:00AM

VERDUGO PARK / GLENDALE

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

LIVE MUSIC

ARMENIAN FOOD

EVENT HOST
LILIT SARGSYAN

KIDS GAMES

ART EXHIBITION

General Sponsors

SAHARA
MIDDLE EASTERN CUISINE
Serving Pasadena since 1992
2226 E. Colorado Blvd.
Pasadena, CA 91107
626.795.6900
www.saharapasadena.com

INNOVATIVE
Designs Manufacturing, Inc.

Sponsors



Kathryn BARGER
5th District Supervisor • County of Los Angeles



HARTOUNIAN
A PROFESSIONAL LAW CORPORATION



Glendale West Pharmacy and Medical Supply



ՄԱՍԻՍ
www.massispost.com

To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցե՛ք՝ Նոր Սերունդ Միություն
(818) 391-7938